



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



1629-1634

1908

17 / 75

---

3nr-68

79m 4-B





Printed in Turkey

ԱՐՏՆԵՐԱՐԵՆ

ԺՈՂՈՒՐԻՆԵՆ

ՀԱՏՈՐ ԵՌԵՎԱՆ

No 300  
p 1268



ԿՈՍՏԱՆՍՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԻՎ՝ ՏՃԵՆՆ ԹԱԿԻՈՒԻ ԲԻԵՐՃԻ ԽԱՆ.

1863



47

# ՄԼՏՆԵՆԵՂԻՆԵՐԸ

17  
1868 ժ ՈՂՈՎՐԳԻԵԸ  
ՀԵՏՈՐ ԿՈՆԳՐԵՍ

ՕԳՏԵԿԵՐ ԽՕՍԵԿՅՈՒԹԻՒՆԻ  
ԸՆՏԱՆԵԱՅ ԿԱՌԱՎ ԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ԵՇ ԽԵՏԵՍՒՐ ԵՅ  
ԽԱԶԱՏՈՒՐ ԲԱՐՈՒՆԱԿ ԻԹԻՒՃԵԱՆ

Ի ՀԵՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
Տ. Տ. ՍԼՏԹԻՂՈՍԻ ԿՈՆԳՐԵՍՈՅ  
ՎԵ Հ Ա Փ Ա Յ Լ

ԵՒ  
ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՒՂՈՍԻ  
ԵՄ ԵՆԵՅՆ ՀԵՏՈՅ

Ի ՏԵՂԱՊԱՀՈՒԹԵԱՆ  
ՊԵՏՐՈՒԹԻՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ  
Տ. Տ. ՍՏԵՓԸՆՆՈՍԻ  
ՍՐԲԱԶԱՆ ԱՐԻ ԵՊԻՍԿՈՍՈՍԻ



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԻՎԻՏՆԱՆ ԹԱՒԷՈՍԻ ՔԻՒՐՔՇԻ ԽԱՆ

# 1863





Ե Ռ

Սաղամեռիկ Հարազատան իմ՝ Սարգիս և Գրիգոր  
Ի . ԻԹԻԻՂՆԵՆ

Օղիդ հատորոցդ ողւոյս իմ՝  
Որ թաղեցայք ի շիրիմ ,  
Փակեալ ըլլելուսդ փափկիկ  
Ի յայդ կենաց անմեղիկ :

Հաճոյական ի նրուէր  
Օայս ձեզ ձօնեմ մատենիկ ,  
Որով ի կրից վատշուէր  
Մարեցիս ձեր համատիք :

Յորչափ նորա ըղձաշակ  
Մոցեն սորին վայելից ,  
Յարասցի Ձերդ յիշատակ  
Մ'ստ ևս , որպէս ի յերկինս :

Խ . Ի . ԻԹԻԻՂՆԵՆ



## ՅԵՌԱԳՆԵՐՆԵՆ :

Հաս մարդիկ կան այս օրուան օրս , մանա-  
 ւանդ Հայաստանու մէջ , որ դժբաղդու թեամբ ի-  
 րենց պատանեկութիւնը դպրոցի մէջ չկրնալով անցը-  
 նել , զուրկ մնացեր են շատ ամենակարեւոր ծանօթու-  
 թիւններէ . և ներկայ ժամանակներս դաստիարակու-  
 թեան ու դիտութեան յարդը որքան որ ճանչուիլ  
 սկսած է , որքան որ բարեկարգ վարժարանաց թիւն  
 հետ զհետէ կը մեծնայ , տակաւին հիներուն միջա-  
 մուխ լինելը անհրաժեշտ ըլլալովն , նորերուն ըն-  
 թացքը ամեն անգամ վատահելի համարուիր . ուստի  
 և դաստիարակութեան կամ բարեկարգութեան գոր-  
 ծը ոչ սակաւ խոչ ու խուժ կունենայ իր քայլե-  
 րուն : Այլ թէպէտ ազգերնուս մէջ տնտեսական գի-  
 տութեան վրայ ծանօթութիւն տուողներ շատ կը  
 գտնուին , սակայն անոնք կերելի թէ այնքան նկա-  
 տած չեն այն ուսումնասէր՝ բայց տարիքնին առած  
 անձինքն , որոնցմէ շատերը տեսնելու պատիւն ունե-  
 ցայ անցեալ տարի Հայաստանու մէջ ճանապարհորդած  
 ժամանակս : Ասոնք թէև բոլորովին անմասն էին գի-  
 տութենէ , բայց սաստիկ եռանդ մը կը ցուցնէին ի-  
 րենց միտքը լուսաւորելու կամ գոնէ իրենց զաւակ-  
 ները անկիրթ կամ ազէտ չթողելու : Տնտեսական  
 դիտութեան հիմնական սկզբանցը բոլորովին անծա-  
 նօթ մնալնին անշուշտ մեծ յոռութեանց , չըսեմ թըշ-  
 ուառութեան մէջ ձգեր էր զիրենք . ընտանեաց տըն-

տեսութիւնը ամենեւին գոհացուցիչ չէր . և ինչ փոփոխութիւններ կամ ինչ բարեկարգութիւններ պիտի ընէին , չգիտէին տակաւին , և միջոցն կպակսէր ռւսներու :


Մշուշտ այնպիսի անձանց հետ խօսակցողն պիտի համակրէ իրենց միճակը . և ի՞նչ է համակրելն եթէ գործնական արդիւնք մը չարտադրէ :

Այս տեսակ համակրութիւն մը ահա թելադրեց ներկայ աշխատութիւնս . որուն ձեռնամուխ եղած ատեն բոլորովին իմ խորհրդոցս ու կարծեացս չմտածելով , ինձ առաջնորդ բռնեցի Մեծօր Ռանտօլֆինի անուն խաչացի ծերունւոյն պատուական գործն և մինչև անգամ իւր ոճոյն հետեւեցայ :

Արդ քաջայոյս եւմ որ ազգասէրք իմ դիտաւորութիւնս իմանալով , պիտի բարեհաճին ներողամիտ լինելու , եթէ ակամայ թերութիւն մը գործոյս մէջ սարգած գտնեն , և իրենց խրախուսովը յորդոր պիտի ըլլան ինձ ուխտիս մէջ յարատեւելու յօգուտ և ՚ի պայծառութիւն սիրելի Աղգիս :

Արդեկա , մարտ 1859 :

Ն Ե Ղ Ի Ն Ա Կ Ն



# ՕՂՏԵՂԵՐ ԽՕՍԵՎՅՈՒԹԻՒՆՔ

## ԸՆՏԵՆԵԼՅ ԿՈՒՆՎԵՐՈՒԹԵԼՆ

Վ Ր Ա Յ

ՀԱՅՐ : Գոյլելի ուսումները, փոյթը , ժրութիւնն ու ճարտարութիւնը , իմաստուն կառավարութիւնը , բարի սովորութիւններն ու ունակութիւնները , մարդասիրութիւնը , անուարարոյութիւնն ու քաղաքավարութիւնը նշանաւոր կրնեն ընտանիք մը :

Աստի պարտին հարք ջանալ , քանի որ ընտանիքնին կը մեծնայ , ապրուստի աղբիւրներն ալ ճոխացնել և առաւելուլ 'ի շնորհս , 'ի բարեսրտութեան և 'ի բարեկարգութեան , հոգ տանելով միանգամայն որ իրենց փառքը , պատիւն ու համարումն ալ աւելնայ որ ըստ օրէ :

Օերք ըստ իմիք ընտանեաց խելքն ու հոգին կը համարուին , և ասոնց ամենէն մեծ ուրախութիւնը աշխարհիս վրայ զաւակներն առաքինի տեսնելն է :

Ըստ նպատակաւ է ահա , սիրեցեալքդ իմ , որ կուզեմ ձեզ հետ խօսակցիլ և ձեզ հաղորդել ինչ որ ընթերցմամբ և ուրիշներու բերնէն ուսած և իմ երկար կենօրս փորձած եմ . որպէս զի դուք ալ իմ խրատներէս և ձեր առանձին ուսմունքէն օգտեալ , զարգանաք 'իբարելաւութեան : Օյի հարց պարտա-

ւորութիւնն է իրենց բարի անուամբ , օրինակովն ու  
խրատութիւնն թէ հարստութեամբ օգտակար լի-  
նել իրենց որդւոցը :

Մ. Երկար կենացս մէջ ուսած բաներուս ամե-  
նէն առաջինն ու խիստ կարեւորը կրնամ ըսել թէ  
տնտեսութիւնն կամ խնայութիւնն է :

Խնայութիւն չընողը դեռ չգիտեր թէ որքան  
տրամադիթ և իւր շահուն վնասակար է զեղխութիւ-  
նը , և թէ ինչ աստիճան դժուարութեամբ ու վաս-  
տակօք հաւաքուեր է հարստութիւնը : Այլ որ սահ-  
ման չդնէր իր ծախուցը , անշուշտ օր մը կաղքատ-  
նայ . և աղքատը աշխարհիս մէջ մեծ անձկութեամբ  
կը տառապի :

Խիստ իրաւացի է այն առածը թէ « իր քսակը  
երկու ստակ չունեցողը մէկ մը չկրնար ակնկալել ու-  
րիշին քսակը » :

Խնայող եղի՛ք ուրեմն , որդեակք , և իրրե-  
օրեբիմ թշնամիէ մը զգուշացէ՛ք աւելորդ ծախքերէ :

ՈՐԴԻՔ : Չեմք կարծեր թէ ծախքէ փախչելով  
ազահ կամ կծծի ըլլալն ալ ձեզ հաճոյ կը թուի :

ՀԱՅՐ : Ոչ երբէք . ազահութեան ու կծծիու-  
թեան պատուոյ և անուան դպչելիք բան մը չկայ աշ-  
խարհիս վրայ . ամենէն պայծառ ու պատուական ա-  
ռաքինութիւնն անգամ ասոնց մօտն կ'աղօտանայ :  
Վճահութիւնը խիստ ատելի բան է , և մեծ նեղու-  
թիւն ու ձանձրոյթ կը պատճառէ մարդոյս : Արտըք-  
նի ազահը հաւաքելու ատեն , կը վշտանայ ի պահե-  
լոն , կը խռովի , կը տրտմի , երբ անակնկալ դիպ-

ուածով մը սովորականէ դուրս ծախք մը ընել ըստիպուի : Այս բաները երբէք չեն պակսիր ազահ ու կծծի մարդոց գլխէն . ուստի և միշտ տրտում է գէմքերնին , և ամենեին չեն կրնար վայելել ստացուածքնին : Այսպիսեաց ոչ մարմինը , ոչ ալ հոգին հանգիստ ունի :

ՈՐԴԻՔ : Սերեմն ազահ կամ կծծի չերևելու համար մտաող լինելու է :

ՀԱՅՐ : Մի որ անխելք երեխի չուղեր , պէտք է խնայող ըլլայ . և ինչու համար . երբ բռնութիւն մը չկայ , խնայող քան թէ մտաող պիտի չլինիմք : Այն ծախքերը , որ ճշմարտիւ հարկաւոր չեն , երբէք գովելի չեն համարուիր իմաստնոց առջին : Այսպէս տեսած եմ , և դուք ալ որ մը կը տեսնէք թէ մարդ մը որքան մեծամեծ ծախքեր ընէ , տակաւին կը մեղադրուի : Անշուշտ ըսողներ պիտի գտնուին թէ այս ինչ բանը խիստ շատ կար , և այն ինչ բանը խիստ քիչ : Այլ թէ շքեղ հրաւեր մը ընես իբր հարկ և տուրք բարեկամութեան կամ բարեկամաց մէջ սէրն ու ընտանութիւնը հաստատ պահելու համար , թողումք մտաց յուզմունքն , հոգն ու շիտթը , բանի մը պակսիլը , ուրիշ բանի մը պէտք լինելը , ծառայից պատճառած ձանձրոյթն և ուրիշ անհամար անձկութիւնները , որք մարդս հրաւերէն առաջ կը յոգնեցնեն . թողումք ստացուածոց կորուստը , վէճերն ու տանը վրդովումը : չիշեմք որ բան մը պահուած չմնար . կը կորսուի այս ինչ բանը , կը կորի այն ինչ բանը , մէկ կողմէն այս ինչ բանը

կուղենն , միւս կողմը այն ինչ բանը փոխ կանուռն .  
 որը կը հրամայէ , որը կը վասնէ , որը կը խնդրէ ,  
 որն ալ կը պատասխանէ . զանց ընեմք կ՛ու խօս-  
 քերը , մեծամեծ պակասութիւններն ու ստորանքը , որք  
 վշտագին տպաւորութիւն մը կընեն մարդոյս միտ-  
 քը . — Եւ ի՞նչ ըսեմք որ եթէ հրաւերդ քիչ մը չա-  
 փաւոր ըլլայ , սակաւք զքեզ կը գովեն շքեղու-  
 թեանդ համար , և բազումք կը մեղադրեն խնայու-  
 թիւնդ : Այլ իրաւամբ չպիտու ծախքերը անխելքու-  
 թեանէ յառաջ կու գան . և խոկմամբ անխելքու-  
 թիւն մը գործելը կրկնապատիկ անխելքութիւն է :  
 այսուամենայնիւ ասոնք ուրիշ աւելորդ ծախուց հետ  
 բազդատելով բան մը չեն . զի տարին մէկ քանի ան-  
 դամ հազիւ կը պատահին . մանաւանդ որ ասանկ հը-  
 րաւերներ ընողը եթէ խելքն բողորովին չէ թռու-  
 ցեր , վերջապէս զինքն կը չափաւորէ : Իսկ անվիճե-  
 լի հաստատուած է սա ճշմարտութիւնը , թէ ուրիշ  
 բան մը այնքան չփութացնէր ո՛չ միայն ընտանեաց , այլ  
 և ամբողջ երկրի մը կործանումը , որքան որ սովո-  
 բական եղած անբանաւոր ծախքերը : Օ՛րհիս անձինք  
 թշնամի են իրենց ստացուած ոցը , և ճամբէ կը հա-  
 նեն ուրիշները փորտքով ապրելու . կապականեն ե-  
 րիտասարդաց բարքը՝ որք բնականաբար հակամէտ են  
 իղբօսանս և ի զուարճութիւն , քան թէ ի գործ և  
 յուսումն . և աւելի յօժարամիտ իրենց հասակակցաց  
 և ունայն ծախքեր ընողներուն մօտն յաճախել քան  
 թէ տնտեսագէտ կամ խնայութիւն ճանչող ծերոց :  
 Այսպիսիները զուարճութեանց մէջ յաճախելով , ի-

րենց ունակութիւն կրնեն զուարճութիւնը . անձնա-  
 տուր կրլան մեղկութեան , խնճոյից և հեշտասիրու-  
 թեան . կխուսեն գովելի և առաքինական սովորու-  
 թիւններէ ու կրթութիւններէ , զեղխութիւնը իրենց  
 մի միայն փառքն ու պատիւը համարելով : Աւելի  
 այնպիսի մը գտնուին որ իւր բարեբարոյութեամբն ա-  
 ռաքինութեան միտեալ է , իսկոյն ուժգնութեամբ  
 վրան կ'յարձակին և զինքն կ'պատեն : Այստեալ  
 և չար ոգիք , զեղխը , որկրամոլը , ստախօսը , սո-  
 գոմականը , խեղկատակը , երգեցողն , պարողը ,  
 խառնագնացը ընդ աղքն և ընդ ծոպ զարգարուած  
 կ'վազեն մեծաւ փութով ի խնդիր թռչնոյն , իբրթէ  
 մոլութեան դպրոցն կամ գործատունն բերելու հա-  
 մար : Այս կերպով պարզամիտ երիտասարդները կրնկ-  
 նին որոգայթը անգէտ ու անկարող անտի զերծա-  
 նելու : Աւելի , ի՞նչ յոռութիւններ չեն գործեր :  
 Ազոզանան իրենց ծնողքէն , ազգականներէն , բա-  
 րեկամներէն . փոխ կ'առնուն , կ'վաճառեն : ( )ըր կը  
 ծնանի , նոր պէտքեր ալ հետը կ'ծնանին , նոր ան-  
 պատուութիւններ , մեծադոյն պարսաւանաց արժանի  
 գործեր կ'կնքեն զտիւր : Այլ քատութիւնը վերջապէս  
 իւր սրնթաց թեօքը կ'հասնի . կ'մնան առանց բարե-  
 կամի կամ պաշտպանի կուրացուին իրենց սրտակից-  
 ներէն՝ զորս իրենց մեծամեծ ծախուցը ատեն բարե-  
 կամ կ'արծէին . կ'մոռցուին այն հրապուրիչներէն , որ  
 մտխելն կ'գովէին և դաւաթ ի ձեռին կերդնուին  
 ու կ'խոստանային կեանքերնին իրենց համար զոհել ,  
 նման ձկանց , որք երբ կ'երբ ջրին մէջ կ'ծածանի , բազ-

մութեամբ կհաւաքուին . կերբ յախշտակուելէն ետև  
 իսկոյն կցրուին , կաներևութանան : Աւ ինչ աղե-  
 տալի օրինակներ տեսած չեն այս աչուրները , զոր  
 հարկ չեմ համարիր յիշել : Օգոյշ կեցէք ուրեմն  
 զեղիսութենէ ու չար ընկերութենէ : Արբէք ձեր  
 միջոցի ներածէն աւելի մի՛ մսխէք . հետևող եղիք  
 առաքինութեան , և հնազանդ՝ ձեր մեծերուն : Հա-  
 ճախեցէք ընտիր ընկերութեանց մէջ , կերպարանե-  
 ցէք ձեր անձը ըստ օրինակի և վարդապետութեան  
 իմաստնոց . մի՛ ըլլաք յերգամիտ և ունայն : Մար-  
 դասիրութիւնը , ողջախոհութիւնն ու պարկեշտու-  
 թիւնը մեծ գովութեան արժանի է յերիտասարդս :  
 Ի մոլութեան կրնակի ստրջանքն ու տագնապը . Իսկ  
 առաքինութիւնը բողորովին ուրախ և զուարթ դէմք  
 մը կներկայացնէ : Հարմարեցէք ժամանակին . եղիք  
 բանաւոր , խոհեմ , ժիր ու զգաստ և ջանացէք ար-  
 ժանանալ գովութեան , շնորհաց և պատուոյ :

Խնայութիւնը երբէք չմնասէր , մանաւանդ թէ  
 շատ օգուտ կգործէ ընտանեաց : Ինչ անվայել  
 բաղձանքներէ , ու ինչ չափտու յօժարութիւններէ  
 զմեզ չկասեցնէր : Օ եղիս պատանիները շատ ան-  
 դամ ընտանեաց շէնքն 'ի հիմանց կխարխալեն . իսկ  
 տեսեսագէտ ու պարկեշտ ծերերը առողջութիւն և  
 կեանք կմատակարարեն անոր :

Խնայութիւն ընող անձը միշտ հանդիստ կապրի ,  
 զի ապահով է իւր ապրուստը . և ունեցածովն բա-  
 ւականացողն ազքատ կամ կարօտեալ չկրնար հա-  
 մարուիլ :

ՈՐԴԻՔ . Մտխող կամ զեղիս անձինք ազահ կոչ-  
ուելու են . զի երբէք գոհ չեն ըլլար շահածովին .  
և ամեն բան կրնեն շահելու համար .

ՀԱՅՐ . Մի՛ խորհիք թէ չափազանց խնայու-  
թիւնը հաճելի բան է ըսել կուզեմ . այլ կիմանամ  
որ ընտանեաց տէր մը պէտք է ՚ր խնայող ըլլայ քան  
թէ զեղիս . զի հարց պարտքն ու յգուտն է խրատել ,  
կրթել իրենց որդիքը , և անոնց բարի օրինակ հան-  
դիսանալ :

ՈՐԴԻՔ . Մտխողը ձեզ հաճելի չլինելով , ան-  
շուշտ չմտխողը հաճելի պիտի ըլլայ : Արդ ազահու-  
թիւնն ու կծծիութիւնն ալ տեսակ մը չմտխել ըլ-  
լալով , ձեզ անհաճոյ լինելու չէ :

ՀԱՅՐ . Ոչ երբէք :

ՈՐԴԻՔ . Ուրեմն ի՞նչ է ձեր ըսած խնայութիւնը .

ՀԱՅՐ . Վա՛ւք լաւ գիտէք որ ես <sup>ե</sup>երբէք լսելով  
գոհ չեմ ըլլար . այլ միշտ կուզեմ փորձելով ստու-  
գել : Չեմ հաւատար , մինչև որ անվիճելի փաս-  
տերով հաստատուի ճշմարտութիւնը : Արդ անհա-  
ճոյ է ինձ մտխողն կամ զեղիսը , զի անխելքութեամբ  
կվատնէ . և կատեմ ազահ կամ կծծի անձինքն , զի  
իրենց ստացուածքը ըստ պատշաճին չեն գործածեր ,  
և միշտ անսահման ցանկութեամբ առաւելին կրփա-  
փաքին . Վիտէք , որոնք են ինձ հաճելի , անոնք որ  
իրենց բարիքն ըստ ժամանակին և ըստ տեղւոյն կը-  
գործածեն , և գիտեն չափը . աւելորդը կպահեն :

ՈՐԴԻՔ . Հիմա հասկցանք . ըսել կուզէք թէ  
անոնք են տնտեսագէտ որ շատին ու քիչին մէջ տե-  
ղը կճանչեն :

ՀԱՅՐ . Նիշդ այդպէս է :

ՈՐԴԻՔ . Եւ ինչպէս կրնայ շատն ու քիչը որոշուիլ :

ՀԱՅՐ . Խիտ դիւրաւ :

ՈՐԴԻՔ . Ենորհք ընէք մեզ բացատրէք :

ՀԱՅՐ . Օգուշանալով կամ նախատեսելով , որ ծախք մը ոչ չափազանց կամ թէ պարկեշտութեան ներածէն աւելի , ոչ ալ հարկաւորէն պակաս ըլլայ : Եւ ստոյգ կրտեմ որ եթէ երբէք անձկութեան մէջ ընկեր եմ , խնայութեամբ քան թէ ուրիշ կերպով կրցեր եմ անտի զերծանիլ :

ՈՐԴԻՔ . Ի՞նչ է ըստ ինքեան այդ ըսած խնայութիւնդ .

ՀԱՅՐ . Ըստ ինքեան է օգտակար , գովելի ու հարկաւոր . և զայս կհաստատեն բոլոր գիտնականները , բանաստեղծք , իմաստասէրք , պատմագիրք . ու քաջ կապացուցուի փորձով : Հայտնի կտեսնէք որ եթէ խնայել չըլլայ , շահը ամենեին տուն չկընար գալ : Եւ ունայն բան է չունեցածդ կամ քեղ բերուածը պահել ուղել . ուստի իրաւամբ կըսուի . «ի՛նչ օգուտ շահելն , երբ խնայութիւն չկայ ի ծախքս» : Մարդ կաշխատի շահելու , որ ըստ պիտոյս գործածէ , առողջութեան ատեն կ'յոգնի , հիւանդութեան ատեն հանդիտ ընելու համար :

Ինչպէս որ միջուկը ամառն պաշարը կպարտատէ ձմեռան համար , նոյնպէս սէտք է գործածել զբամբ , և ոչ թէ պահել սէտք եղած ժամանակ : Օյ տեսնեսութիւնը ոչ թէ պահել ըսել է , ալ

ի պիտոյս գործածել : պէտք եղած ատեն ծախուց  
խնայելը կծծիութիւն է , հետեաբար և մեղադրելի  
ու մեասակար :

Վիտած էք արդեօք այնպիսի անձինքն՝ որ քաղց-  
կեղ եփելու համար միրգ ու մեղր կգնեն , և չա-  
փաղանց խնայութեամբ մրգաց լաւն յուրիկն չզատե-  
լով , կընուն զամենքն մէկ անօթի մէջ ու կպահեն .  
Եւ անգամ մ'ալ ձեռք չեն զարներ մինչև որ ապա-  
կանի , Արծես թէ թափելու համար աշխատած են :  
Լաւ ևս չէք , տխմարք , առաջ մէկ քիչ ընտրու-  
թիւն ընել , և ժամանակին գործածել զայն սեղանին  
վրայ , կամ տալ ուրիշին : Վսիկայ տնտեսութիւն ,  
պահել կրնայ կոչուիլ , վասնել չէ՞ արդեօք :

Վստայէս է նաև երբ որմի մը մէկ կողմը ան-  
պատասպար թողուած ատեն անձրևէ օդը : Ածծին  
երկրորդ աւուրը կսպասէ , յետոյ միւսին . չուզեր  
ծախք ընել . դարձեալ կանձրևէ , ջուրը խորքն կը-  
թափանցէ : Ափտտին ատաղձներն , կճայթին , կկոտ-  
րին , կկործանի որմը , և ան ատեն մէկ դրամոյ մեա-  
սը տասնով չկրնար գոցուիլ : Վսկէ յայտնի կտես-  
նուի թէ որքա՞ն մեասակար է ժամանակին և ըստ  
հարկին ծախք ընել չգիտնալը : Ստացուածքն խո-  
հեմութեամբ պահելն ու գործածելը յաջողութենէ  
ու ժրութենէ աւելի պիտուական է :

Վրդ հասկցուելով թէ ի՞նչ է տնտեսութիւնը ,  
կճնայ հիմա քննել թէ ի՞նչ բան կայ աշխարհին վը-  
րայ , որ բացարձակապէս մերն կրնայ կոչուիլ . և զոր  
գործածելու կամ պահելու կատարեալ իրաւունք ու-  
նիմք :

ՄՐԴԻՔ . Արօնք են այդ բաները .

ՀԱՅՐ . Մի՞թէ կինս , տունս , որդիքս : Ա՛չ .  
ասոնք մերն չեն կրնար կոչուիլ . զի այն բաները որ  
մենէ կրնան առնուիլ , մերը չեն : Վաղղը կրնայ մենէ  
յափշտակել մեր կինը . որդիքն , ստացուածքը և այլն :

ՈՐԴԻՔ . Կրնայ :

ՀԱՅՐ . Ուրեմն աւելի իրն քան թէ մերն են :

ՈՐԴԻՔ . Ե՛յն բանը որ կերպով մը մենէ չը-  
կրնար յափշտակուիլ , որո՞ւ է :

ՀԱՅՐ . Մերն կրնայ մենէ յափշտակուիլ . ու-  
սածնիս , գիտցածնիս , փափաքնիս , իղձերնիս , յո-  
ժարութիւննիս և այլն :

ՈՐԴԻՔ . Ե՛նչուչտ ոչ :

ՀԱՅՐ . Ե՛հա այսպիսի բաները մերն են . և ե-  
րեք բան կայ որ իսկապէս մերը կրնայ կոչուիլ . զորս  
մեր ծնած օրէն բնութիւնը մեզ կպարզէ և ըստ կամս  
գործածելու համար թէ ի չարն և թէ ի բարին ,  
երբ և ինչպէս որ ուզեմք :

Ե՛սոնց մէկն է հոգին կամ այն մասն մեր գո-  
յութեան , որով կզգամք , կխորհիմք , կարամարա-  
նեմք և այլն :

Արրորդն է մարմինը՝ զոր բնութիւնը հպա-  
տակացուցած է հոգւոյն իբր իւր գործին կամ բնա-  
կարանը ծառայելու համար .

Արրորդն է ժամանակը , որ ոչ կրնայ կապուիլ ,  
ոչ կրնայ պակսիլ , ոչ ալ կերպով մը մերն չըլլալ ,  
եթէ այնպէս ուզեմք :


ՈՐԴԻՔ . Ե՛ամանակը ինչպէ՞ս մերն կըլլայ :

ՀԱՅՐ . Եթէ մակոյկի մը մէջ գետի մը վրայ  
դանուիք , և ինչպէս կոպատահի , երեսնիդ կամ ձե-  
ռուներիդ աղտեղէք , ձերը կըլլայ ջուրը , եթէ անով  
լուացուիք :

ՈՐԴՒԹ . Մ.Յ՛ :

ՀԱՅՐ . Եթէ զայն չգործածէք , ձերը չլինիր :  
Մ.Յայէս է ժամանակը . եթէ գործածեմք զայն լուա-  
լու կամ այն աղտն հանելու , որ զխելքն ու իմացա-  
կանութիւնը նսեմացուցեր է սոգիտութեամբ , չարա-  
կամութեամբ և անհամեստ ցանկութիւններով , ան-  
ատեն երջանիկ ու երանելի կլինիմք : Եթէ է որ  
երբ ժամանակն գործածեմք ի մարդ և յուսումն  
գիտութեանց և արուեստից և յօգտակար կրթու-  
թիւնս , մերն կըլլայ : Իսկ երբ թողումք որ օր ա-  
ւուր ետեէ անցնի , երթայ առանց բան մը ուսանե-  
լու կամ պատուարժան բան մը շահելու , մերն չըլ-  
լար : Ակորսնայեմք ուրեմն ժամանակը վայելչապէս  
չգործածելով . և կամ անոր է ժամանակն որ օգ-  
տակարութեամբ կգործածէ :

Հիմա , որդեակք իմ , դուք ալ հողի , մարմին  
և ժամանակ ունիք ձեռուրներիդ , զոր բնութիւնը ձեզ  
պարզեած է : Կիտէք ասոնց որքան անգին բաներ  
լինելն : Կիտէք որ մարմնոյն առողջութեանը ամեն  
բան զոհ կընեմք . Հապա որչափ առաւել զհողին քա-  
ջառողջ , առաքինի ընելու համար մարմնոյն բոլոր  
ցանկութիւնները զոհ պէտք է ընել : Իսկ ժամա-  
նակը հարկաւոր է ի վայելչս մարմնոյ և ի հանգիստ  
հողոյ , և ամեն բանէ աւելի պիտուական :



ՈՐԴԻՔ . Մեծապէս շնորհակալ եմք ձե՛նէ ,  
կաղաչեմք , շարունակեցէք խօսքերնիդ .

ՀԱՅՐ . Ըսի առաջ թէ խնայութիւն կամ տըն-  
տետութիւն ըսածնիս հարստութիւնը ըստ հարկին գոր-  
ծածելն է . Հիմա քննեմք մանրամասնաբար թէ  
ինչպէս պիտի պահեմք ու գործածեմք մարմինը , հո-  
գին ու ժամանակը : Աւ նախ խօսիմք հոգւոյն վը-  
րայով : Հոգւոյն տեստութիւնը զհոգին անձիս  
ընտանեացս և բարեկամացս հարկաւոր և Մատուծոյ  
հաճելի գործոց մէջ միայն գործածելն կհասկցուի :

ՈՐԴԻՔ . Ի՞նչ են ձեզ և ընտանեաց և այլն  
հարկաւոր եղած բաները :

ՀԱՅՐ . Մտաքփնութիւնը , մարդասիրութիւնը ,  
ազնուաբարոյութիւնն և այլն : Երաւ է որ մանկու-  
թեանս ատեն անհոգութեամբ փոյթ չունեցայ ուս-  
ման , զուարճութիւնն նախապատիւ համարելով . բայց  
երբ խելահաս եղէ , սկսայ անձս տալ ընթերցման և գի-  
տութեան . կգնէի միտ գիտնոց խօսիցն , կճանայի զին-  
քրս սիրցնել և պատուոյ ու գովութեան արժանանալ :  
Մեն բանէ աւելի կաշխատէի բարեսիրտ , արդարա-  
դատ և համեստաբարոյ ըլլալ . այսինքն՝ ջնարել , չա-  
նիրաւել մէկը թէ խօսքով և թէ գործով . ուսու-  
ցանել , խրատել , ուղղել զմոլորեալը . սէր , վստա-  
հութիւն և գովութեան ունենալ ուրիշին վրայ , տալով  
բարի խորհուրդ թէ առանձինն և թէ հրապարակաւ ,  
խոհեմութեամբ , անկեղծութեամբ և ողջմտու-  
թեամբ : Գործածել զիմացականութիւնն , զգիտու-  
թիւնը և զհանձարն ի բարին և ի պատիւ հայրենեաց

և իւրոյն : Աննոնաւոր բռնել հոգւոյն յօժարութիւն-  
ները կամ իղձերը , սիրելն , ատելն , զզուելը , կա-  
միլը , յուսալը , ըղձալն և այլն . այսինքն՝ սիրել զբա-  
րին , ատել զչարն , և փափաքիլ գովելի բաներու :

ՈՐԴԻՔ . Արքազան ուսմունք . իսկ ի՛նչ եղա-  
նակաւ կպահուի հոգին առ Աստուած :

ՀԱՅՐ . Երկու եղանակաւ . և այլն՝ Ա՛ որքան որ  
հնար է , անդորր պահելով զայն , և ոչ երբէք յու-  
զեալ բարկութեամբ , նախանձու և ցանկութեամբ :  
Ի՛ շնորհակալ ամեն արժնութեամբ , որ այնպիսի գործ-  
մը չգործեմք , որ երկմտիմք թէ արդեօք բարի է  
թէ չար :

ՈՐԴԻՔ . Ա՛ յսչափս կբաւէ՞ արդեօք :

ՀԱՅՐ . Կարծեմ թէ կբաւէ . զի բարին ու  
ճշմարիտը միշտ պայծառ կփայլի . իսկ բարի ու ճշ-  
մարիտ չեղած բանը միշտ շփոթ ու կասկածելի կեր-  
պարանքմ՝ ունի . և պէտք չէ կամիլ գործել զայն ,  
այլ խոյս տալ իբրև ի խաւարէն : Մեր գործոց լոյսը  
ճշմարտութիւնն , մեր բարութիւնն է , որ կձկտի ,  
կծաւալի մեր բարի գործոցը , բարի համբաւոյն և  
բարի անուանը հետ : Չկայ այնքան աղօտ ու խա-  
ւարային բան մը մարդոյս կենացը մէջ . որքան չարա-  
գործութիւնը , անբանաւորութիւնն ու վատանունու-  
թիւնը . և ոչինչ այնքան հաճելի , որքան առաքինու-  
թիւնը , բարութիւնն ու համեստութիւնը :

ՈՐԴԻՔ . Ա՛ յսօր կիմանամք ձե՛նէ , ոչ միայն  
տնտեսութեան այլ և քաղաքավար կերպով ապրելուն  
ինչ լինելը . այսինքն՝ ըլլալ ուսումնասէր , առաքի-

նասէր , ընել այնպիսի գործեր որ կասկածելի կամ  
երկբայելի չեն . և կաղաչեմք որ մարմնոյն վերաբե-  
րեալ տնտեսութեան վրայ ճառէք :

ՀԱՅՐ . Մարմնոյն տնտեսութիւնը ճիշդ հոգ-  
ւոյն տնտեսութեանը կենանի . այսինքն՝ գործածել  
զայն գովելի եղանակաւ , պարկեշտութեամբ ու հա-  
մեստութեամբ . պահպանել զայն որքան որ հնար է ,  
ողջ առողջ և գեղեցիկ . պահել զայն մաքուր ու  
սուրբ , և գործածել ձեռքն , ոտքն , լեզուն և միւս  
անդամները , ինչպէս խելքն ու միտքը ի գործս պա-  
տուականս և յօգուտ հայրենեաց , ընտանեաց և  
անձին :

ՈՐԴԻՔ . Մեծապէս շնորհակալ եմք ձեզ որ  
ձեր խրատուցն համեմատ մեզ օրինակ ալ կհան-  
դիսանաք : Արդ շնորհք ըրէք ըսելու թէ ինչ  
բան օգտակար է առողջութեան : Արովհետեւ ձեր  
հասակացոցը մէջ ձենէ առոյգ , ձենէ քաջառողջ  
ու բարետես մէկն չեմք տեսներ . զի ձեր ձայնը , լսո-  
ղութիւնն ու տեսութիւնը լաւ վիճակի մէջ է . ջի-  
ղերնիդ կորովի , անդամներնիդ ազատ և առողջ , որ  
այնքան հազուագիւտ բան է ձեր հասակին մէջ :

ՀԱՅՐ . Վոհութիւն Վստուծոյ , ողջ առողջ  
եմ , թէև առջի առոյգութիւնս չունիմ : Վայց այս  
հասակիս մէջ առոյգութենէ աւելի խելք ու խոհե-  
մութիւն պէտք է ինձ : Այլ հիմա վայելած առողջու-  
թիւնս բոլորովին պարտաւոր եմ ողջախոհութեան ե-  
րիտասարդական հասակիս մէջ :

ՈՐԴԻՔ . Թանկագին է առողջութիւնը . և ինչ-  
պէս կրնամք զայն պահել :

ՀԱՅՐ. Չափաւոր ու զուարճալի կրթութեամբ .  
կրթութիւնը կամ շարժումը շատ օգտակար է ի պահ-  
պանութիւն կենաց . ջերմութիւն ու կորովութիւն կը  
մատակարարէ մարմնոյն . կրառնայ չպիտու և փնա-  
սակար հիւժերը , կկազգուրէ ջիղերը : Սոկրատի  
համար կը պատմեն թէ տանը մէջ շատ անգամ կը  
պարէր ու կցատկէր :

ՈՐԴԻՔ. Ի՞նչ բան օգտակար է ասկէ ետե :

ՀԱՅՐ. Պարկեշտութիւնը , զգաստութիւնն ու  
զուարճութիւնը կենսական պայմանքն են քաջառող-  
ջութեան :

ՈՐԴԻՔ. Եթէ կրթութիւն կամ շարժումն չըլ-  
լայ , ի՞նչ ընելու է ան ատեն :

ՀԱՅՐ. Երբեմն կպատահի որ պատեհ չեմք  
ունենար . ան ատեն պէտք է մեծ զգուշութիւն ը-  
նեմք կերածնուս և խմածնուս , դժուարամտութեան կերա-  
կուրներէ կասիմք և աւելի չափաւոր ըլլամք :

ՈՐԴԻՔ. Ահապէս որ կրթութիւնը կամ շար-  
ժումը , ուտելեաց ու ըմպելեաց զգուշութիւնը , բա-  
րեխաոնութիւնը և փնասակար բաներէ կասիլը կը  
պահեն զառողջութիւնը . այնպէս չէ :

ՀԱՅՐ. Եւ ոչ միայն զառողջութիւնը այլ և  
զգեղեցկութիւնը . զի առողջութեան հոգ տանողը  
կպահպանէ նաև իր ոյժը , դիմաց գոյնն ու զուար-  
թութիւնը : Մաքուր արիւնն ու կորովութիւնը ար-  
դիւնք են զգաստութեան :

ՈՐԴԻՔ. Մարմնոյն ու հոգւոյն տնտեսութիւնը  
փոքր ի շատէ հասկնալով , շնորհք ընէք ժամանակինն  
այ մեզ ճանչցնել :

ՀԱՅՐ . Արդէն ձեզ յիշեցի որ անտեսութիւնը  
 բան մը լաւ գործածելն և ոչ թէ պահելն է : Տանք  
 ընելու է ուրեմն լաւ գործածել ժամանակը . այսինքն  
 ի գովելի կրթութիւնս և յուսումն դիտութեանց և  
 ոչ յանառակութեան . միտ դնել անցեալ և յիշա-  
 տակաց արժանի գործոց և անցից . զարդարել յի-  
 շողութիւնը օգտաւէտ ծանօթութիւններով ու ընտիր  
 իմաստներով . ըլլալ քաղաքավար , անուշաբարոյ և  
 բարեսիրտ , ստանալ դիւրութիւն կամ ճարտարութիւն  
 ի խօսս և ուղիղ դատումն յիրս աշխարհի . ծուլու-  
 թեամբ կամ անգործութեամբ կամ քնով չվատնել  
 զայն , այլ միշտ գործով մը զբաղիլ : Աւ գործերն  
 շիտթէ ազատ պահելու համար հարկ է որ առաւօ-  
 տուն անկողնէ ելած ատեն մարդ իր բոլոր ընելիքը  
 լաւ մը մտածելով կարգի դնէ : Իմաստունք կրսն  
 թէ ժիր մարդն երբէք չտապեր : Աւ իրաւի , զի  
 անսիրտ կամ ծոյլ անձինք ժամանակն կորսնցնելով ,  
 կստիպուին դիւրաւ կատարելիքնին մեծ ձգամբ ու  
 դժուարութիւնով գլուխ տանիլ : Ժամանակին բան  
 մը առնելու հոգ չտանելով , անշուշտ մեծ դժուարու-  
 թիւն կկրեն վերջը գտնելու :

Աւ ինչպէս որ առաւօտուն գործերն կարգադ-  
 րելը , նոյնպէս ալ երեկոյին բոլոր աւուր գործերը  
 յիշելն , և անոնց վրայ քննութիւն ընելը խիստ օգ-  
 տակար կրնայ ըլլալ : Աւ եթէ անանկ պակսութիւն  
 մը գործեր ես , զոր կրնաս հիմայ դարմանել , անմի-  
 ջապէս ձեռն ի գործ եղիր . զի լաւ ես է անքուն  
 մնալ քան թէ պատահութիւնն կորսնցնել : Քնոյ ,

կերակրոյ պակասն երկրորդ օրը կրնայ լեցուիլ, իսկ  
ժամանակինը ոչ երբէք :

Նուրութեան չափ անպիտան գործերէ ալ խոյս  
տալով, միշտ անանկ գործոց հետեւելու և զբաղելու  
եմք որ միանգամայն շահ գործեն թէ հոգւոյն թէ  
մարմնոյն և թէ անուան : Մնանկ գործոց՝ որ պա-  
տիւ ու փառք ըլլան մեր ընտանեացը, հայրենեացն  
և անձին : Մյսպէս ընելովնիս, այսինքն մեր կարո-  
ղութեանը չափ հոգին, մարմինն ու ժամանակը լաւ  
գործածելովնիս, պարսաւելի չլինելէ զատ, խղճեր-  
նիս ալ զմեզ չդատապարտէր . հարստութիւնը,  
փարթամութիւնը միշտ մերը չեն, անկայուն բաղդը  
ընտանիքներն, քաղաքներն, աշխարհները, թագա-  
ւորութիւններն ու կայսրութիւնները աղքատութեան  
և թշուառութեան մէջ կձգէ շատ անգամ . հայրերը  
անզաւակ կ'ընողու, անբաւ հարստութիւնները յե-  
տին աղքատութեան կ'հաւասարյնէ . անունն անգամ  
բնաջինջ կրնէ աշխարհիս երեսէն :

ՈՐԳԻՔ . Աւ տնտեսութիւն ընելու է բաղդին  
պարզեացն ալ, ինչպէս են ընտանիքն ու հարստու-  
թիւնը, պատիւն ու խնամութիւնը :

ՀԱՅՐ . Գործածութեամբ մերն եղած բանին  
համար տնտեսութիւն չընելը մեծ յիմարութիւն է :  
Միայն թէ ըստ ասից Տերենգեայ լատին երգիծաբա-  
նին, յաջողութեան Տէլ յախորդութեանը հորէ հանելու չէ,  
նման ճանապարհորդին, որ տանն մտնեցած ատեն  
կսկսի կ'ստկածել թէ գուցէ զաւակացը կամ կնոջն  
գժբաղդութիւն մը պատահած ըլլայ, և կերպով մը

չարեացն դարման կմտած է : Նախատեսնուած ներառ  
այնքան չմնասեր : Սանաւանդ որ եթէ նախատեսած  
ձախորդութիւնդ չպատահի , մեծագոյն զուարճու  
թիւն մը կզգաս : Այս ընթացքն պէտք է բռնեմք  
յաջողութեան և բարօրութեան ատեն , մանաւանդ  
երբ բաղդն սկսի իր դէմքը մէկ քիչ խոժոռցնել :

ՈՐԴԻՔ . Նաղդին պարզեացը ո՞րն ամենէն սի  
րելի է ձեզ :

ՀԱՅՐ . Նտանիքը . բայց ասիկա պէտ ընելու հա  
մար հարստութեան և բարեկամաց կկարօտիմք . բա  
րեկամաց արժանանալու համար առաքինի ու պատուա  
ւոր լինելու եմք : Այլ առաքինի ըլլալու չափ ի՞նչ  
դիւրին բան կայ մեր կարողութեանը մէջ : Ո՞վ  
չկրնար ըլլալ , եթէ ոչ չուզողը , յիմարը , որ աշ  
խարհիս անկայուն բաները քան զառաքինութիւնս  
նախապատիւ կհամարի :

ՈՐԴԻՔ . Նտանիք ըսելով ի՞նչ կիմանաք :

ՀԱՅՐ . Օ՛ւաւակներս , կիմա , ծառայքս ու աղա  
խինքս :

ՈՐԴԻՔ . Այլ ի՞նչ տեսակ տնտեսութիւն գոր  
ծածելու է ասոնց նկատմամբ :

ՀԱՅՐ . Ղիշդ ի՞նչ տնտեսութիւն որ քո անձիդ  
համար կգործածես . այսինքն՝ օգտակար ու պատուա  
ւոր գործովք զանոնք զբաղեցնել , առողջ ու զուարթ  
պահել և հոգ տանիլ , որ ժամանակը չվատնեն : Ա  
մեն անձ իրեն յատուկ գործն ունենայ . տիկինը կա  
ռավարէ կամ խնամէ տղաքը և հսկէ ստացուածոց ու  
ծախուց վրայ . մէկ ծառայով կատարուելիք գործը

երկուքի չյանձնուի . և երկուքի ընկելքը մեկուն  
կամ անպիտանի մը առջին չդրուի . զի մէկ հոգւով  
կատարուելիք գործը երկուքի յանձնելով , անշուշտ  
մէկը դատարկ պիտի մնայ . և երկու հոգւով տեսնել-  
լիք գործը բոլորովին մէկուն վրայ ձգելովդ , գո-  
հունակութիւն չես կրնար ակնկալել : Աործոց բա-  
ժանումն ալ շատ օգտակար բան է , և ամեն մարդ  
իրեն յարմար եղած գործը լաւ ևս կկատարէ :

ՈՐԴԻՔ . Ի՞նչ մը գնած ատենդ միայն հարկա-  
ւոր եղածին չափ կառնես թէ աւելի :

ՀԱՅՐ . Թերեւս մէկ քիչ աւելի , եթէ գնածս  
շուտ ապականելիք , կոտորուելիք կամ կորսուելիք բան  
մը չէ . զոր կամ կպահեմ կամ թէ բարեկամի մը  
կմատուցանեմ : Իսկ ամենէն կարեոր բանը ուշադիր  
ըլլալն է որ ընտանեաց պիտոյիցը մէջ բանի մը պակ-  
սութիւն չզգացուի :

ՈՐԴԻՔ . Ի՞նչ կամ որո՞նք են ընտանեաց պի-  
տոյքը :

ՀԱՅՐ . Ընտանեաց պիտոյքը խիստ շատ են , և  
բազմին ներածին չափ միայն կրնամք լեցընել :

ՈՐԴԻՔ . Եւ որո՞նք են ամենէն կարեորն ու  
հնարաւորը :

ՀԱՅՐ . Տուն մը , սնունդ , հագուստ և դաս-  
տիարակութիւն , բայց ամենէն հարկաւորը այս վեր-  
ջինն է . այսինքն՝ ներշնչել տղոց սիրտը սէր յուսումն  
և յառաքինութիւն . վարժել զանոնք ի հնազանդու-  
թիւն . զի ուր ակնածութիւնը կպակսի , հոն օրէ օր  
կաճի մոլութիւնը : Ըստ անգամ տեսնուած է որ

աղնուարարոյ , զգաստ ու ժիր սլատանիները ճնողաց  
անհողու թենէն վերջապէս այս բոլոր գեղեցիկ ունա-  
կութիւնները կամ յօժարութիւնները կորուսեր են :

Հայր մը տունը հացով լեցնելով իւր պարտա-  
ւորութիւնը կատարած չըլլար . այլ պարտի հակել  
զաւակացը վրայ : Վիտել անոնց ընկերքը , քննել  
վարքերնին թէ դուրսը և թէ ներսը . չարութենէ  
զուսպ պահել զանոնք մեղմ բայց ազդու խօսքերով  
քան թէ բարկութեամբ . իբր հայր և ոչ իբրև բռն-  
նաւոր վարուելով հեռերնին : Այնպիսի ընթացք մը  
բռնել , որ զաւակները երբէք հեռանան իրենց պար-  
տաւորութենէն : Վովելի գործոց համար վառելով  
սրտերնին , նախատեսել որ մամենեին վտանգ մը չպա-  
տահի իրենց : Աշմարել մոլութեան վատանունու-  
թիւնը և զուսպ պահել զանոնք չափազանց ազա-  
տութենէ :

ԱՐԳ.Ի.Բ. Անթաղրեմք թէ մենք արդէն մեծ ըն-  
տանիք մը կկազմենք , ծախքերնիս շատ են , և կը  
փափաքիմք ձեզ նման խնայող , պարկեշտ , համեստ  
ու զգաստ ըլլալ . փառաւոր տանց մէջ բնակիլ և այլն ,  
ինչ ընթացք պիտի բռնեմք :

ՀՅՅԲ. Ժամանակը , յաջողութիւնն կամ ձա-  
խորդութիւնը գիտէ : Ասէ իմ համոզումս ան է որ  
թէ մեր կենացը և թէ քաղաքական իրաց մէջ խել-  
քը բաղդէն աւելի նախապատիւ , ու խոհեմութիւնը  
ի ձախորդութեան ամեն բանէ գերազանց է : Աւ միշտ  
խոյս տալու եմք անգործութենէ , դատարկապորտու-  
թենէ , անհողութենէ և չափազանց ցանկութենէ :

լինելով անդորրամիտ , զգաստ , ժիր , մարդասէր ու  
բարեսիրտ , և ատելով զտգիտութիւնը , մոլութիւ-  
նը , գոռոզութիւնն ու հպարտութիւնը : Այս կեր-  
պով ամենուն սիրելի կըլլայ մարդ : Օյ կղաղրի  
նախանձը , ու կղաղրի շուքը կամ փառասիրու-  
թիւնը . կնուաղի ատելութիւնը , ուր գոռոզութիւնը  
չաճիր . կշիջանի թշնամութիւնը , ուր տհաճութիւն  
չկայ :

ՈՐԴԻՔ . Ենթէք ընէք մեզ հասկցնէք թէ ինչ-  
պէ՞ս կառավարելու կամ թէ գործածելու եմք հա-  
րրատութիւնը . կամ ուրիշ խօսքով , եթէ դուք մեր  
տեղն ըլլաք ի՞նչ կընէք :

ՀԱՅՐ . Եթէ ես ձեր հասակն ըլլամ , շատ բա-  
ներ կընեմ : Աջանամ նախ կարգաւորեալ տուն մը  
ունենալ . որպէս զի ամեն եղանակի և պարագայի մէջ  
հանգիստ ընելով , չստիպուիմք տեղափոխութիւն ը-  
նել : Օյ տեղափոխութիւնը մեծ ծախքեր ու ան-  
հանգստութիւնք կպատճառէ : Եւ շատ բան կկոր-  
սուի , կկուտրի , կապականի . և այս փնամները մինչե-  
որ լեցուին , բաւական ատեն անցնելով , շփոթն չը  
պակսիր գլխէդ :

Ատանալիք տանս տեղը քաջամնունդ օդ մը ու-  
նենալու է . որովհետեւ մանկական տիոց շատ փնա-  
սակար է վատառողջ օդը : Անձ հողածութեան ար-  
ժանի է առողջութիւնը . զի քաջառողջ մարդուն միշտ  
դիւրին է ապրուստն ձարել . իսկ հիւանդը կամ վատ-  
առողջն երբէք չկրնար հարուստ համարուիլ :

ՈՐԴԻՔ . Եւ ի՞նչ բան մարդոյս քաջառողջու-  
թեանը կնպաստէ :

ՀԱՅՐ . Ինչպէս որ ըսի քաջասնունդ օղն ու քաջառողջ կերակուրները , և մանաւանդ լաւ գինին :

ՈՐԴԻՔ . Իսկ բնակարանի նկատմամբ հաստ մը ծախու առնելն լաւ է թէ վարձելն :

ՀԱՅՐ . Ընչուչա ծախու առնելը , միայն թէ բաւական ընդարձակ , բարեշէն ու կանոնաւոր ըլլայ . այսինքն նստելու և պառկելու սենեակները հողէն վեր ըլլան , լուսանց քն մեծկակ , որմերը կիրով բռուած . և առիքն բարձր , որպէս զի լաւ օդ բանի :

Ըն ատեն ընտանիքդ ալ հանգիստ կընէ . և և թէ հիւր մը դայ , ընդունելու տեղ կ'ունենաս :

ՈՐԴԻՔ . Ընչպիսի տեղ առնելու է տունը :

ՀԱՅՐ . Ըյնպիսի տեղ մը , ուր օդը քաջառողջ , փողոցը բանուկ և դրացիքը բարեկիրթ են . որպէս զի ընտանիքդ կարենայ հետերնին տեսնուիլ : Աւ առաջմէ հարցնելու փնտուելու է թէ հոն բնակողները հիւանդոտ էին թէ ոչ :

ՈՐԴԻՔ . Տունն առնելէն ետե ի՞նչ կարգադրութիւն ընելու է ընտանեաց մէջ .

ՀԱՅՐ . Որ ամենեին բաժանուամն չըլլայ . այսինքն՝ ամենքն ալ մի և նոյն սեղանն նստին . զի ան ատեն մի և նոյն կրակն ու մի և նոյն ճրագը ամենուն ալ բաւէ : Մանաւանդ որ բաժանումը համարձակութիւն կուտայ օտարին : Միաբանած ընտանիքը միշտ ակնածելի ու գովելի է աշխարհիս մէջ . և ընտանեաց գլուխը ան ատեն ևս առաւել կհամբաւի : Ընտանեաց օգուտն ու պատիւը նախապատիւ բռնելու է անձնական օգտէ . և կընկնի գլուխը երբ ան-

դամները կանջատուին : Նոտանեաց բաժանմամբը մարդոց թիւը չպակսիր , բայց պատիւն ու համարումը կնուաղի :

ՈՐԴԻՔ . Աթէ ընտանիք մը այնքան մեծնայ , որ ալ տունն չքաւէ բողորովին , ի՛նչ ընելու է :

ՀԱՅՐ . Բաժանումը անհրաժեշտ է ան ատեն . բայց նայելու է որ բարեկամութեամբ ըլլայ :

ՈՐԴԻՔ . Ա՛հ , որքա՛ն զուարճալի է միատեղ ճաշելն . և արդեօք լաւ կերակրելն ալ փափաքելի՞ է :

ՀԱՅՐ . Արկրին նկատմամբ վայելուչը միշտ փափաքելի բան է : Հաւերն և ուրիշ ընտիր կերակուրները տկարաց և հիւրոց աւելի կ'յարմարին . իսկ ուրիշ մսեղէնքն , աղնիւ գինին ու պատուական հացը երբէք չեն կրնար արհամարհիլ :

ՈՐԴԻՔ . Ա՛յս բաները օրէ օր գնելու է թէ ոչ :

ՀԱՅՐ . Որքան որ հնար է իր եղանակին գնելու է քան թէ օրէ օր :

ՈՐԴԻՔ . Ա՛մեն տեսակէն պէտք եղածը տարին մէ՞կ անգամ գնելու է :

ՀԱՅՐ . Միայն այն տեսակ բաները որ կրնան անվտանգ պահուիլ , և տանը մէջ անհանգստութիւն չպատճառել շատ տեղ բռնելով :

ՈՐԴԻՔ . Վրամով գնելէ զատ ի՛նչ միջոց կայ այս բաները հոգալու :

ՀԱՅՐ . Վրամով գնելէ աւելի շահաւոր է երկիր ունենալ կամ մշակել տալ . զի միշտ աւելի դիւրագնի տունդ կուգայ ցորենդ , գարիդ , գինիդ , փայտդ ու մրգեղէնդ . և եթէ կենդանի ալ պահես ,

իւղղ , պանիրդ , թանդ , միսն և այլն :

ՈՐԳԻՔ . Մշակելիք երկիրդ ամփոփ տեղ մը ըլլալու է՝ թէ զանազան մասանց անջատեալ :

ՀԱՅՐ . Մամփոփ տեղ մը ըլլալը նախապատիւ է :

ՈՐԳԻՔ . Ի այց գինի հանելու համար այգին զառ ի վայրի վրայ արեւշատ տեղ պէտք է . ցորենի համար դաշտային կամ բացօդեայ վայր մը , և հողը կակուղ ու թեթեւ լինելու է . փայտը բլրի վրայ շուտ կհասնի , խոտը զով ու խոնաւ տեղուանք և այլն :

ՀԱՅՐ . Մըդ այսքան տարբեր բաները ինչպէս կրնամք ամփոփ տեղ մը մշակել :

ՈՐԳԻՔ . Նանկ տեղուանք տեսած եմ , ուր օդը քաջանունդ , երկիրը զուարթ , տեսքը գեղեցիկ , ուր ոչ գետ մը կյորդէ , ոչ տեղատարափն կհեղեղէ , ոչ ալ գողք կյափշտակեն . ուր հազիւ կպատահի մեասակար հողմք հնչել . ուր ջուրն է բարեհամ և առատ , ամեն բան քաջառողջ , մաքուր ու աղնիւ (1) :

Մհա այսպիսի տեղ մը ձեռք ձգելու է , զի ան ատեն ամեն բան կրնաս մշակել և հանդիստ սնուցանել ընտանիքդ . միայն թէ բնակարանդ շատ հեռուն ըլլալու չէ . որպէս զի կարենաս յաճախակի այց երթալ և մշակներդ դիտել : Օյի հիմակուան ժամանակներս մարդոց չարամտութիւնը սահման չունի :

---

(1) Ի հրատարակել իմ զուղեորութիւնս ի Հայաստան , Մեթերցասէրք այսպիսի վայրաց նկարագրութիւններ յաճախ պիտի տեսնեն :

Նորոր մտած մունքնին զմեզ խարել է. երբէք հաշուի մէջ իրենց շահուն զէն գալու սխալմը չեն գործեր :  
 Մնաց կիսնդրեն որ իրենց համար եղ, ոչխար, այծ, մատակ և այլն գնեմք. յետոյ փոխ ստակ կուզեն, որ իրենց պարտատեարցը վճարեն. հազուստ պէտք կըլլայ ընտանեացն և օժիտ դասերցը : Խորձիթնին նորոգութեան կկարօտի. կարճ խօսքով ամեն օր բան մը պիտի պակսի իրենց : Այլ որքան որ հարստանան, այնքան աւելի կուլան, այնքան աւելի խղճալի կցուցնեն վիճակնին : Հետդ խօսած ատեն անշուշտ նոր ծախուց հաշիւ մը քեզ պիտի ներկայացնեն : Աթէ բերքն առատ ըլլայ այս տարի, լաւ մասն իրենց պիտի պահեն, եթէ առատութիւն չըլլայ, զէնն միայն վրադ պիտի ձգեն, միշտ լաւն իրենց, յոռին քեզ պիտի ըլլայ :

ՈՐԳԻՔ. Ուրեմն լաւ ևս է շուկայէն ամեն բան գնել քան թէ այդպիսի մարդոց հետ գործ ունենալ :

ՀԱՅՐ. Վաւարոյն է այսպիսեաց հետ գործ ունենալ, զի ան ատեն աւելի փորձ կըլլամք ու լաւ ևս կրնամք վարուիլ քաղաքացւոց հետ : Վիւղացիք զմեզ կսովընցնեն անսիրտ չըլլալ. և եթէ ժիր ու արժուն մնամք, քիչ անգամ կպատահի որ անոնք զմեզ խարեն :

ՈՐԳԻՔ. Ա՛հ, որքան իրաւամբ և իմաստութեամբ կխօսիք :

ՀԱՅՐ. Արկիր գնելու ատեն հողոյն բեղմնաւորութեանը չափ օգոյն քաջառողջութիւնն ալ դիտելու արժանի է : ( )դը քաջառողջ եղած տեղն

մինչև անգամ պտղեղէնք և մրդեղէնք առատ , աւելի ընտիր ու համեղ կըլլան : Մանաւանդ որ անառը երբ հոն երթաս , առողջութիւնդ ալ կօղտի և զուարճութիւնդ կատարեալ կըլլայ : Այնպիսի տեղ մը ըլլայ երկիրդ , որ պտղեղէնք և մրդեղէնք առանց դժուարութեան և բազում ծախուց տունդ կարենան բերուիլ . և ուղած ատենդ երթաս դործերուն նայիս : Ասանկով աշխատաւորք ալ հոն յաւճախելդ տեսնելով , խարդախութիւն կամ ծուլութիւն չեն կրնար ընել :

Մրդի ծառերը կարգաւ և ընտրանօք պէտք է տնկել , անանկ որ տեսքը զուարճալի և շուքերնին բուսոց անմեաս ըլլայ . կամ թէ ըսեմ հողին հիւթը չպակսի , կամ թէ պտուղները ժողոված ատեն դործերը չաւրին : Ա՛հ , ի՞նչ գեղեցիկ բան է տնկելն , պատուաստելն ու մի և նոյն ծառին վրայ զանազան տեսակ մրդեղէն հասցնելը : Աւ ի՞նչ անպատմելի բերկրութիւն չպատճառեր ձեռօքդ բրցնելն ու բարեկամիդ կամ ազգականիդ մատուցանելը :

ՈՐԻԲ . Ո՛վ կրնայ անզգայ ըլլալ այդ զուարճութիւններուն :

ՀԱՅՐ . Այս տեսակ երկրի մշակութիւնը զուարճալի ըլլալէ զատ օգտակար ալ է : Վոչոր միւս դործերն ցաւօք , վտանգով , մտատանջութեամբ ու երկիւղիւ լի են : Ա գնելն հողն կտիրէ , ի փոխադրելն երկիւղը , ի պահելն վտանգը , ի վաճառելն անձկութիւնը , ի հաւատալն կասկածը , ետ առնելու ատեն աշխատութիւնը : Ասկ արող միշտ հաւատա-

թիմ ու ճշմարտաստու է , միայն կուզէ որ իւր վրայ  
 սէր ունենաս ու լաւ խնամես զինքը : Ի Վարնան կա-  
 նաչութիւն , գոյնզգոյն ծաղկունք , անուշահոտու-  
 թիւն , թռչնոց գեղգեղանքն են տեսածներդ ու լը-  
 սածդ : Եւ մեն բան կծիծաղի , առատ կութք կը  
 խոստանայ , յուսով , զուարճութեամբ և բերկրու-  
 թեամբ զքեզ կլնու : Աւ ինչ ըսեմ իւր քաղա-  
 քաւարութեանն նկատմամբ : Տունդ երբէք դատարկ  
 չթողուր . մերդ մրդի ետե , պտուղ պտուղի ետե կը-  
 խրկէ : Եւ շնան մէջ բողոր աշխատութիւնդ քեզ կը-  
 դարձնէ , և արժանեացդ կամ ճարտարութեանդ հա-  
 մեմատ կիւարձատրէ աշխատութիւնդ . միոյն փոխարէն  
 տանն , կաթիլ մը քրտանց համար կարաններով գինի  
 կհատուցանէ : Այնու տունդ թարմ ու չոր խաղո-  
 դով , շորով , ընկուղով , թուղով , տանձով , խնձո-  
 րով , դեղձով , ծերանով , սերկեխով , նուշով , յու-  
 նապով և ուրիշ պատուական միրգերով : Չմենն ալ  
 զքեզ չմոռնար , կխրկէ քեզ որթոց ուսեր , ձիթե-  
 նի բալուտ և այլն վառելու համար : Աւ եթէ հաճիս  
 իւր մօտն մնալ , իւր ընդարձակութիւնը կբանայ առ-  
 ջիդ , կմատուցանէ քեզ նապաստակ , այծեամն , կա-  
 դաւ , փասեան և ուրիշ շատ թռչուններ ու հաւեր ,  
 վառեակներ , հաւկիթ , կաթ , սեր , պանիր և այլն .  
 և կջանայ որ բողոր տարին բան մը չպակսի տունդ :  
 Աւ կրնամ արդեօք ըստ բաւականին զինքն գովել : Եւ  
 մեն ժամանակ ըսած են որ մշակեալ երկիրը ապաս-  
 տանարան է բարեսիրտ , պարկեշտ , իրաւասէր ու  
 անտեսագէտ անձանց : Ընն չկայ խաբէութիւն , դա-

տաւորի և վկայի կարօտութիւն . Հոն գործ չունի  
վէճն ու մտատանջութիւնը : Հոն տօն օրերը ծառայ  
չուքը հանգչած , խօսակցութեան նիւթ կը լայ քեզ  
խաշինքն , բուրձը , եղինք , որձերը . Երբ քաղաք-  
ները անիրաւութիւնը , կագն ու կոխը և ուրիշ սոս-  
կալի կիրքերն կտիրեն :

Մ. գարակիդ մէջ բան մը տհաճութիւն կամ դժ-  
գոհութիւն չպատճառեր , բարկութեան կամ ցաս-  
ման առիթ մը չկայ : Մ. մենքն ալ իրարու խօսք կհաս-  
կինան . ամեն մարդ իւր գործը կճանչէ , ամեն մարդ  
կիտաիւրի սխալն իմանալ և իր մշակութիւնը կատա-  
րելագործել : Արբ տնկեա կամ սերմանես , մէկը շնա-  
խանձիր , այլ ամենքը կգովարանեն դ.քեզ : Օգը  
պայծառ եղած օրերը ինչ զուարթ դէմքեր , ինչ  
բերկրալի տեսարաններ չեն ներկայացներ դալարա-  
զարդ բլուրները , մարդագետիներն , վճիտ ջրոց աղ-  
բիւրները , առուներն , որք ոստոստելով իբր թէ կը-  
թաղչին խոտերուն հերացը մէջ : Աւ որքան կտար-  
բերին ասոնք քաղաքաց և հրապարակաց տեսարաննե-  
րէն , գոռոզութենէն , հպարտութենէն , բռնութե-  
նէն , անօրէնութենէն և այնքան չար մարդոցմէ , ո-  
րոնք քաղաքն միշտ աչացդ առջին են և ականջներդ  
անոնց խօսքերովը կլեցուին շարունակ : “Մ.Տ , կեանք  
երանական , երջանկութիւն ոչ ծանուցեալ” :

Այլ երջանիկ մշակաց՝ զիւրեանց ՆիՏ թէ գի-  
տիցեն :

Ա իրք . մշակ . Վ. 458 :

ՈՐԴԻՔ . Ուրեմն աւելի նախապատիւ է գեղն  
կամ աղարակն բնակիլ քան թէ քաղաքն :

ՀԱՅՐ . Գիւղերն մոլութիւնը , անհանդատութիւնը , շիտոթն ու ծախքը քիչ կը լինան . իսկ առողջութիւնը լաւ վիճակի մէջ կ'ապահուի :

ՈՐԴԻՔ . Օգտակներն հոն մեծցնելու է :

ՀԱՅՐ . Աթէ բոլոր կեանքերնուն մէջ բարի անձանց հետ ընկերանալն հնարաւոր լինէր , գիւղը անտարակոյս քաղքէն նախապատիւ կրնար համարուիլ : Բայց չարակամ մարդոց թիւը այնքան շատցած է այժմ , որ հարց անհրաժեշտ պարտաւորութիւն է մեծ խոհեմութեամբ զանոնք ճանչցնել իրենց որդւոցն ու անոնցմէ զգուշացնել : Աւ ի՞նչպէս կրնամք մոլութիւնը դատել եթէ ոչ ճանաչելով զայն : Ի՞նչպէս կրնամք ձայնն կամ եղանակն որոշել եթէ կիրթ ազանց չունենամք : Աւ նախ մնասել , վիրաւորել , յարձակել գիտնալով չէ՞ որ մարդ կրնայ խոյս տալ թշնամւոյն հարուածէն կամ զանձն պաշտպանել անոր դէմ :

Եւս պատճառիս համար լաւ ևս է պատանեակները ի քաղաքս դաստիարակել , ուր մարդոց չափ մոլութիւնն ալ բազմաթիւ է . և ասկէ զատ քաղաքավարութիւն կուսնին , արհեստից կճանօթանան և մոլութեան անպատուութիւնը լաւ ևս կհիմանան : Հոն քաջ ևս կտեսնեն պատուոյ , բարի անուան , ազնուաբարոյութեանն ու ճշմարիտ իրաւաց դեղեցկութիւնն և իրաւացի արդար գովեստից ու առաքինութեան քաղցրութիւնը : Ատեսնեն այս գերազանցութիւնները , կսկսի սրտերնին տրուիալ , և ամեն բանէ նախապատիւ կբռնեն զանոնք :

Մյս խորհրդածութիւններն ընելէս ալ ետքը տակաւին կերկրայիմ, վճաքար չեմ կրնար ըսել թէ որն օգտակարագոյն և աւելի ապահով է. ի քաղաքս թէ ի գիւղս դաստիարակել պատանիները: Վիցի որպէս և է: Չկրնար ուրացուիլ որ քաղաքներն են գործարանք հոյակապ շինուածոց, տերութեանց, պետութեանց, իշխանութեանց, անուան և փառաց. իսկ ի գիւղս կրնակի անգործութիւնը, գոհունակութիւնն, անվրդով ապրելու ազատութիւնն ու քաջառողջութիւնը: Ալ և թէ իմ նկարագրածիս համեմատ ըլլայ ազարակդ, տարւոյն մեծագոյն մասը և թէ ոչ ըողորը, հոն կ'մնամ, իւր մատակարարած զուարճութիւնը կ'վայելեմ, և պարկեշտութեամբ ու բանաւորութեամբ կտածեմ ու կդաստիարակեմ զաւակներս:

ՈՐԳԻՔ. Ալ հագուստ կհագցնես ընտանեացդ:

ՀԱՅՐ. Մտկա առաջինն պիտի ըլլայ իմ խորհրդոցս. այսինքն՝ վայելուչ կերպով հագուեցնել ընտանիքս. զի և թէ այնպէս չընեմ, ազահ կամ կծծի պիտի համարուիմ. և ան ատեն ատելութիւնը ընտանեացս մէջ, և բամբասանքն դուրսը, ծնունդ պիտի առնէ:

ՈՐԳԻՔ. Ալ ի՞նչ հագուստ պիտի հագցնես անոնց:

ՀԱՅՐ. Քաղաքացւոց և ոչ գիւղացւոց հագուստ. մաքուր ու վայելչաձև, ընտիր գոյներով և ազնիւ տեսակ չուխայէ կամ կտաւէ: Հանդիսաւոր օրերը նոր հագուստ, լուր օրերը գործածուած հա-

գուստ , և տան մէջ ամենէն հինը : Հանգերձը  
պատիւ կրնէ մեզ . բայց մեք ալ զանոնք պատուելու ,  
այսինքն՝ խնայութեամբ գործածելու եմք :

ԱՐԳԻՔ . Ընտանեաց բոլոր անդամոցն ալ գե-  
ղեցիկ հագուստ պիտի հագցնեն :

ՀԱՅՔ . Այո , ըստ հասակի իւրաքանչիւրին .  
անշուշտ զգալի տարբերութիւն մը լինելով անոնց  
հագուստին վրայ , որ զուրիշները կգերազանցեն ի-  
րենց ժիր , հլու և ազնիւ բնաւորութեամբը : Օյի ա-  
ռաքինին պատուելն ու վարձատրելը պարտք մըն է , և  
կվառէ ուրիշներուն սիրտը բարի նախանձով :

ԱՐԳԻԲ . Ալ և կխօսիք . բայց ո՞ւստի ճարելու է  
հանգերձից դրամը , ագարակին պտուղքն վաճառելով :

ՀԱՅՔ . Այժմ մեր գործածութեանը բաւելէ ե-  
տե բան մը եւելնայ , ի տրամ կվերածեմ զայն և  
պիտոյքս կհոգամ : Ա՛վաճառելը քան զգնելէ օգտա-  
կարագոյն է ընտանեաց տեառնը : Օ՛ախքը միշտ կըլ-  
լայ . մանր ու խոշոր ծախքերը երբէք չեն պակսիր .  
այսօր գլխարկ պէտք կլինի , վաղը տպած , միւս օ-  
րը կօշիկ : Այժմ ծառայ ունիս , կբանի ամսականը .  
զաւկներդ կմեծնան , հարսանիքներ ընել , օժտել կըս-  
տիպուիս : Ար մէկ ծախուցդ բաւ է ագարակիդ բեր-  
քը : Հարկ կըլլայ ուրեմն որ ուրիշ գործ մ'ալ գոր-  
ծես . և՛ եթէ բան եւելցնելու կարող ըլլաս , պա-  
հելու ես զայն սովորականէ դուրս ծախք մը պատա-  
հած ատեն , կամ հայրենեացդ կամ ազգիդ խրա-  
խոյս տալ որ ժիր ըլլան և մանաւանդ գրիչը երբէք  
ձեռքէ չձգեն : Այս կերպ վարուելով կյուսամ թէ

ստուած ալ յաջողութիւն կուտայ և մարդիկ կ'յա-  
ճախեն կրպակդ . որով և շահն ալ օր ըստ օրէ  
կեւելնայ :

ՈՐԴԻՔ . Վործաւորները անհիշթ են և իրենց  
անձնական օգուտը իրենց տեառնն օգտէն վեր կըռնեն :

ՀԱՅՐ . Վործաւոր մը վարձած աստէն մեծ ըղ-  
գուշութիւն ընելու է , և իրեն յանձնած գործոց  
վրայ շատ անգամ ճարպիկութեամբ հարցումներ ը-  
նելն զինքն արթուն կպահէ . զի գիտնալով որ բան  
մը քենէ ծածուկ չէ , անշուշտ ճշմարիտը պիտի խօսի :  
Նշեթէ սիտալ մը կամ յանցանք մը գործէ , աւելի  
կընայ անգամ մ'ալ չգործել զայն : Նշե իմաստուն  
ու փորձ վաճառականները կըսեն թէ առւտրի տէր  
մարդուն մատուրները միշտ թանաքով ներկուած կըլլան :

ՈՐԴԻՔ Ի՞նչ կհասկցուի ատկէ :

ՀԱՅՐ . Մտքն ու ծախքը միշտ գրի անցնել . զի  
եթէ այնպէս չընեմք , շատ բան կրնայ մոռցուիլ . և  
ասիկայ նշմարելով գործաւորներն , իրենք ալ կսկը-  
սին խարդախութիւններ գործել : Ահատ կարւոր է  
նաև , որոց հետ որ առւտուր կընեմք , լաւ հասկնալ  
գործերնուն վիճակը : Մյս տեսակ բաներու անհո-  
գութենէս որքա՞ն գրամ կորսնցուցած եմ : Չհար-  
ցուցած , չփնտռած ուրիշին ապրանք հաւատալով , մէկ  
մ'ալ սնանկութիւննին իմացեր եմ : Նշե յիմար ու  
կոյր է այն մարդը որ իր գործը ուրիշին ձեռքովը կը-  
կատարէ . չտեսած՝ ապրանք կգնէ և ուրիշի խօսքով  
կվաճառէ :

ՈՐԴԻՔ . Ըսել կուզէք թէ լաւ ընտրութիւնն ըս-  
 նելու է գործաւորաց . այսինքն՝ լաւ հասկնալու է ա-  
 նոնց վիճակը , բարքերնին , սովորութիւններնին , ու  
 նակութիւններնին և այլն : Այլ որո՞նք նախապատիւ  
 են , օտար գործաւորներն թէ ազգականաց կամ ծա-  
 նօթից մէջէն եղողները :

ՆՅՅՐ . Եւստ տարբեր կարծիքներ կան այս կէ-  
 տին վրայով . ոմանք կպնդեն թէ օտարականը աւելի  
 նախապատիւ է . զի աւելի հլու և հնազանդ կը լայ :  
 Աւրիշները կըսեն ու կերկրային թէ մերոնք գուցէ ժա-  
 մանակին մեր ոտքն առնեն : Ինձ հարցնելու ըլլաք ,  
 ես կուզեմ որ անակ ծառայ մը կամ գործաւոր մը  
 չունենամ որ կարենայ ինձ թշնամութիւն մը ընել  
 կամ նենգել : Չեմ յոստար թէ օտարը իմ այգաւ  
 կցիս կամ ծանօթիս չափ կակնածէ ու կսիրէ զիս . թէ  
 և կարելի է որ անկէ աւելի հլու ու հնազանդ գրաւ  
 նուի : Ազգուշանամ պատիւս կամ հեղինակութիւնս  
 անանկ մէկուէն ձեռքը դնելու որ ինձ կրնայ վնաս առ-  
 թել : Այլ անխելքութիւն կհամարիմ կարծելն թէ  
 առանց շնորհաց և օղնոթեան ուրիշին , մարդ կրնայ  
 ի պատուի մնալ : Աոյնպէս անխելքութիւն ու ան-  
 պատուութիւն կհամարիմ իմիններէս աւելի օտարին  
 ընդունելի զինքս կարծելն . Վայց այս խնդիրը բոլոր  
 բովին չուճելու համար առաջ պէտք է վճուել թէ  
 մերոնք լաւ են թէ յոռի :

ՈՐԴԻՔ . Լաւ են :  
 ՆՅՅՐ . Արեմն անոնք մեր մօտն լաւ ազոյն կը լան  
 քան թէ օտարք . Այլ ինձ աւելի բանասոր կթուի մեր

ծանօթիցն ու ազգակցացը վրայ վստահութիւնն ու սէր  
ունենալ քան թէ օտարաց վրայ, և եթէ պակասու-

թիւն մը գործեն, մեր պարտքն չէ՞ զանոնք խրատել:

ՈՐԴԻՔ. ՂԶմարտիս է, լայց եթէ զմեզ խաբէն:

ՆԱՅՐ. Եւ որք լաւագոյն է, տեսնել որ օ-  
տարը զմեզ խաբէ թէ մեր ազգակցը:

ՈՐԴԻՔ. Մեր ազգակիցները աւելի հաւատա-  
րիմ դանուելու են. և եթէ անհաւատարմութիւն մը  
գործեն, աւելի անհաճոյ կլինին մեզ:

ՆԱՅՐ. Մտքերնուդ հանեցէք այդ սխալ կար-  
ծիքը. ձեր ազգակիցներէն որք չուզէր որ ձեզ հեա  
գործ ունենայ քան թէ օտարին հեա: Կուք ձեր

վրայ դատողութիւն ըրէք, որք աւելի հաճելի է ձեզ,  
ձերիններուն օգտակար ըլլալ թէ օտարաց: (Օտարը

կջանայ ձեզ հաճոյ երեւիլ. Կայց մեր պարտքը ամե-  
նէն աւելի մեր ծանօթներուն օգտակար ըլլալն է: Ե-

թէ օտարը քու միջոցաւդ շահի ու հարստանայ, վեր-  
ջը դքեզ չձանչեր. Իսկ քու ազգականքդ երբէք

չեն կրնար ուրանալ քու լարերարութիւնդ. և հե-  
տեարար անոնք ալ օր մը քու ընտանեացդ կնապա-

տեն: Եւ մինչև անգամ եթէ ապերախդ դանուին  
քեզ դէմ, տակաւին աւելի նախապատիւ է դա-  
նոնք ի բարեյաջողութեան տեսնել քան թէ օ-  
տարները: Եւ միթէ ազգականացդ ամենքն ալ  
չարամիտ են, ամենքն անխելք են: Ի՞նչու հա-  
մար հոգ չես տանիր լաւն վատէն որոշելու: (Օտարը  
ինչպէս կրնաս ձանչել եթէ ազգականդ լաւ ևս կձան-  
չես, ինչո՞ւ համար լաւ ընտրութիւն չես ընել: Ի՞նչ

չու համար հաւատարիմն չես առնելի դործոցդ մէջ :  
 Արժ խօսքով ատելութեան ու անարդանաց նշան է  
 իրենները երեսէ ձգել և օտարին երես տալ . իրեն-  
 ներուն չվստահիլ և օտարին վստահիլ :

ՈՐԴԻՔ . Իրաւունք ունիք . զի ասանկ ընելով  
 մինչև անգամ եթէ զէն կրեմք , մարդիկ շատ չեն  
 ինգար վրանիս . մանաւանդ որ անվիճելի ճշմարտու-  
 թիւն համարուած է , թէ ան որ չսիրելի իրենները ,  
 չգիտեր թէ ինչ է սիրելը :

ՆԱՅՐ . Աթէ ձեր ազգակցացն կամ ծանօթի-  
 ցը մէջ ձեր դործոյն յարմար անձինք կգտնուին , ա-  
 մենեին օտարաց մէջ մի՛ փնտռէք : Աւ ինչ անպատ-  
 մելի ուրախութիւն ձեզ չպատճառելի անոնց թախան-  
 ձանքն , զանոնք կրթելը , անոնց հայր կոչուելը . ինչ  
 զուարճութիւն չմատակարարելի տեսնել որ անոնք  
 յոյսերնին ձեր վրայ դրած են . իրենց բարօրութիւ-  
 նը ձեր բարօրութենէն կախեալ կհամարին : Ասկէ  
 որքան կտարբերի օտարին ընթացքը : Աթէ քիչ մը  
 դործէ հասկնայ կամ փոքր գումարի մը տէր ըլլայ ,  
 իսկոյն կսկսի քեզ հետ ընկեր ըլլալ ուղել կամ քե-  
 նէ բաժնուիլ : Աէճեր կյարուցանէ որ իր վիճակը  
 բարելաւէ , ամենեին բանի տեղ չդնելով քու պա-  
 տիւղ կամ օգուտդ :

ՈՐԴԻՔ . Եւ համողութեանք այս ճշմարտու-  
 թեանը . կխոստովանիմք որ մեծապէս պարսաւելի բան  
 է իրեններն չինամելն . և իրեններուն հետ վարուիլ  
 չգիտցողը օտարին հետ վարուիլ ամենեին չգիտնար :  
 Շնորհակալ եմք ձեզ ձեր տուած խրատուցը հա-

մար : Արդէն բաւական տեղեկութիւն ստացանք տան ,  
կալուածոց , կրթութեանց և գործաւորաց վերա-  
բերեալ տնտեսութեան վրայով : Շնորհք ընէք  
քիչ մ'ալ արտագոյ կարգի ծախուց վրայ խօսելու ,  
ինչպէս են պարզե տալ մէկուն , հասարակաց կամ  
ազգին օգտին , դպրոցի կառուցման , դասատու կանգ-  
նելու համար դրամ նուիրել :

ՀԱՅՐ . Արդէն ըսած եմ որ մեր անձին և ըն-  
տանեաց համար ամենակարևոր եղած ծախքերը խնա-  
յելն մեծ անպատուութիւն է . սնունդն ու հագուս-  
տը հարկաւոր են , և դաստիարակութիւնը խիստ կա-  
րևոր : Իսկ չպիտու կամ հարկաւոր չեղած ծախքերն  
անոնք են , որ չընելովդ մեզ չես կրեր . ինչպէս են  
տունդ ներկելը , արծաթեղէն անօթներ ունենալն ,  
շքեղ հագուստներ հագնելը և այլն : Աոյնպէս հար-  
կաւոր չեն փառաւոր կազմով կամ ոսկեղօծ դրեան-  
քըն , շքեղ ձիան ու հանդերձանք , ոսկեպատ հրա-  
ցաններ և այլն . և առոնք կամաւոր ծախք կրնան  
կոչուիլ :

ՈՐԴԻՔ . Ի՞նչ կանոն դնելու է հարկաւոր ու  
կամաւոր ծախուց համար :

ՀԱՅՐ . Հարկաւոր ծախքերը անհրաժեշտ են  
միշտ :

ՈՐԴԻՔ . Ամենեին պէտք չէ՞ մտածել թէ ի՞նչ  
պէս կրնամք ամենալաւ կերպով զանոնք ընել :

ՀԱՅՐ . Անշուշտ ամեն ծախք մտածելով ընե-  
լու եմք . բայց իմ ըսելս ան է որ , եթէ հնար է ,  
ժամ մը առաջ ընելովն իս , սիրտերն իս կհանգչի : Իսկ

կամաւոր ծախուց մէջ դանդաղութիւնը շատ օգտա-  
կար կրնայ ըլլալ. զի այս ընթացքը բռնելով, պա-  
տեհ կուեննամք տեսնելու թէ կանցնի՞ փափաքնիս .  
և եթէ չանցնիր, դէթ ամենափոքր ծախիւք զանոնք  
լեցնել կմտած եմք :

ՈՐԴԻՔ . Այս մասին ծերոց խորհուրդ հարցը-  
նելն ալ օգտակար կրնայ ըլլալ :

ՀԱՅՐ . Երբ փորձով աւելի դիտեն քան  
ինչ որ գիտութեամբ կրնայ դիտցուիլ. սպիտակ ծե-  
րաց, և ծերութեան տարիներուն մէջ երկայնաձիգ  
անցելի մը յիշատակն կպարունակի . մշակեալ միտք  
մը ներկայ անցելոյն հետ կբաղդատէ, և կտեսնէ թէ  
ինչ ընթացիւք յաջողութիւն կրնայ ըլլալ գործոյ մը  
մէջ : Երոց խրատը խիստ վստահելի է . զի հան-  
դարտ է միտքերնին . իսկ երիտասարդք արիւնային  
են : Երբ փորձած են թէ ինչ է ապրիլը, խորհած  
ու տեսած են թէ որ տեսակ կեանքն է լաւագոյնը :  
Միշտ օգտակար թուած է ինձ ծերոց մօտն յաճա-  
խիլ, և անոնց խորհուրդ հարցնել . զի ժամանակը ա-  
մենէն ընտիր դաստիարակն է մարդոյս . անիկա քաջ-  
ահմուտ և ուղղադատ կրնէ զմեզ :

ՈՐԴԻՔ . Իայց քանի՞ դժուարին է ձեր տուած  
կանոնացն համեմատ տնտեսութիւն ընել :

ՀԱՅՐ . Ամենեին դժուարութիւն չկայ . ով որ  
ուզէ, շուտ կսովորի :

ՈՐԴԻՔ . Ի՞նչ է գլխաւոր պայմանն կամ միջո-  
ցը, որով մարդ շուտով տնտեսագէտ կրնայ ըլլալ :

ՀԱՅՐ . Ով որ ժամալաճառ չլինիր, ամեն բան

լաւ կկատարէ : Աւ ուլ որ ժամանակն գործածել գիտէ , տէր կըլլայ ամենայնի : Աւ իրօք կամ երևոյթ ուլ դժուար եղած գործ մը երբ ձեռք նկատես , թէ օղուտդ և թէ զուարճութիւնդ համեմատաբար մեծ կըլլայ , և անգամ մ'ալ նոյնը ընելուդ բողորովին դիւրացած կգտնես : Անձապէս կուրախացնէ զմեզ մեր անձին գոհունակութիւնը , և մեծ գոհունակութիւն կզգամք երբ մեր պարտքը կամ գովելի գործ մը կատարելք : Աւ մեր գործը կատարելէ աւելի ինչ կրնայ գովելի ըլլալ : Տես մրջուներ ինչպէս վաղուանը այս օրձնէ կպատրաստէ , և մեղուները ինչ սքանչելի կառավարութեան ներքե կաշխատին : Բողորն ալ մեծի մը կհնադանդին , ոմանք ծաղկներու քաղցր հիւթը կհաւաքեն , ուրիշները հաւաքուածը կտանին , ուրիշները բեռերը կընդունին և ոմանք ևս շէնքը կըկառուցանեն : Ամենքն ալ ի միասին կտգնին ժողոված հարստութիւննին շապնելու և պաշտպանելու : Այսպէս ահա պիտի կարգադրես գործդ : Արանութդ քանի ծառայ որ ունիս , ամենուն գործը որոշելու և անանկ կերպով մը որ իրեն խիստ յարմար կարենայ լինել :

Աւ տես սարդը իր նուրբ թելերը ինչպէս ճառագայթածե կտարածէ , և գործած կտաւին կեդրոնն իւր նիստը կհաստատէ , որպէս զի երբ որ և է կողմ թել մը շարժի , անմիջապէս զգայ զայն , և ըստ այնմ գործէ : Նրտանեաց տեառն ընթացքն ալ այսպէս լինելու է . իր գործոյն կամ տանն վերաբերեալ ամեն բան պէտք է ճանչէ , և զանոնք այնպիսի կեր-

պով մը բռնէ , որ դըռնին միայն ինքն ըլլայ . կամ  
իրը թէ կեդրոնական դիրք մը բռնած , կարենայ ա-  
մեն բան շուտով տեսնել ու լսել :

ՈՐԳԻՔ . Պատուական օրինակ . բայց ի՞նչ կըր-  
նամք ընել երբ բեռերնիս խիստ ծանրանայ :

ՀԱՅՐ . Արբ հօր մը կամ ընտանեաց տեան  
բերը խիստ ծանր է , պէտք է գործակից մը դանէ  
իրեն : Արանց կվայելէ տնէն դուրս աշխատիլ ու շա-  
հիլ տանն համար . տանը միւս գործոց հոգնալտիկ-  
նոջն կպատշաճի : Աւ ինչպէս որ անպատիւ բան է  
տիկնոջն տնէն դուրս գործոյ զբաղիլ , նոյնպէս ալ  
պարսաւելի բան է որ այրը տունն կանանց մէջ փակ-  
ուած մնայ : Մեծ ամօթ կթուի ինձ որ մարդ մը  
տանն բոլոր խորշերը , բոլոր անկիւնները խուզարկէ ,  
մինչև անգամ պատրոյկին հաստ կամ բարակ ըլլալն  
դիտէ :

ՈՐԳԻՔ . Ղուկելի բան է ամենն դիտել . բայց  
կարծեմք թէ ասանկ մանր մունր իրաց համար միայն  
հոգնեցնելը անխելքութիւն է :

ՀԱՅՐ . Աւ իրաւի . ղի ինչպէս որ հիները կը  
սէին , մարդս ի բնէ մեծամիտ է , և յարմարութիւն  
ունի զօրութեամբ և հնարիւք չարիքն արգիլել կամ  
դէմ դնել ամեն տեսակ ձախորդութեան որ կրնայ  
պատահիլ կամ իրեն , կամ հայրենեացն , կամ կը-  
րօնքին և կամ զաւակացը : Մարդն կնոջմէ աւելի  
քաջասիրտ , հաստատամիտ ու յարատեող է . աւելի  
կտոկայ վաստակոց , աւելի կհամբերէ անձկու-  
թեան , աւելի ազատ է ուղած տեղն մտնելու , ել-

նելու , և օտար երկիրներ շրջելու : Անայք ընդհա-  
կառակն երկչոտ , մեղկ ու դանդաղաշարժ են . և ա-  
ւելի յարմարութիւն ունին նստողական կենաց : Տը-  
նութիւնը նախադասեր ու անօրիններ է ամեն բան .  
արանց տուեր է յօժարութիւն տուն բերելու . կա-  
նանց՝ պահելու և պահպանելու տուն բերուածն ու  
իրենց անձը երկիւղիւ ու կասկածով :

Այլը կպաշտպանէ զտունը , տիկինը , զաւակ-  
ներն ու հայրենիքը , ոչ նստելով , այլ խոկմամբ ,  
շարժումով , արիութեամբ , քրտինք և արիւն թա-  
փելով : Ահ , ի՞նչ պարսաւանաց արժանի չեն այն  
կնացեալ դատարկապորտները՝ որք ամենեկին քաջա-  
սրբութիւն չունին . և ի՞նչ արհամարհանաց արժանի  
չեն այն վատարայ այն անձինքն՝ որք իբր կին քան թէ  
այր երեխը նախապատիւ կհամարին : Օ՛հ առաքինի  
գործերն սիրողը առաքինի ըլլալ ևս կիտալաքի . և  
կանացի բնաւորութիւնը շանարդողը , կանացի կոչուիլ  
ալ չամաչեր : Վովելին , ինչպէս որ արդէն յիշեցի ,  
տան և ուրիշ մանր իրաց կառավարութիւնը կանանց  
յանձնելն , և այրական գործերը մեզ պահելն է :  
Արովհետեւ այր մը պարտի ոչ միայն մարդալայել գոր-  
ծերն կատարել , այլ և խոյս տալ ամեն տեսակ կանա-  
ցի գործերէ : Տիկնոջն կվայլէ խոհագործութենէ  
լաւ հասկնալ , որպէս զի հիւր մը պատահած ատեն  
կարող ըլլայ ըստ արժանւոյն զայն պատուել :

Ասով չեմ ուզեր ըսել թէ անպատճառ ինքն  
պիտի ելիէ կերակուրը , երբ ծառայ կգտնուի տանը  
մէջ , այլ կխմանամ որ կարենայ ծառայիցն հրամայել

կամ ուսուցանել . զի շատ անգամ ուղած ատենդ  
խոհագործ չգտնուիր , մանաւանդ դիւղօրէքն :

ՈՐԴԻՔ . Եւ ինչպէս կրնայ մարդ իւր կիներ  
այդ կատարելութեանցն տէր ընել :

ՀԱՅՐ . Չեզի պատմեմ թէ ինչպէս ձեր մայրը  
կատարեալ եղաւ : Ասիկայ մեր տուն հարս բերուելէն  
մէկ քանի օր ետքը , երբ սկսաւ սիրտը մէկ քիչ տաք-  
նալ տանը վրայ , բռնեցի ձեռքէն և բոլոր տունը  
զինքը պատարնելով , ցոյց տուի իրեն ցորեն , դարի ,  
և փայտ պահելու տեղուանքն և բոլոր կահն ու կա-  
րասիքը , անոնց պատշաճ տեղիքն ու գործածութիւ-  
նը : Հետոյ զինքն առանձին սենեակս տարի և դու-  
ռը վրայէն փակելով , ցուցի իրեն ինչ որ ունէի հա-  
գուստի վերաբերեալ և սակեղէն , արծաթեղէն և  
ուրիշ թանկագին բաներ :

ՈՐԴԻՔ . Ինչո՞ւ համար այդ թանկագին բա-  
ները սենեակդ կպահէիր :

ՀԱՅՐ . Օ՛ր ամենէն ապահով տեղն այն էր . և  
հոն առանձինն զանոնք ուղած ատենս կրնայի տես-  
նել : Աղէկ չէ որ բոլոր ընտանիքն ամեն ունեցածդ  
հասկնայ . և եթէ մէկ կամ երկու հոգի միայն դիտ-  
նան , վտանգը քիչ կըլլայ . ու թէ որ բան մը կոր-  
սրուի , աւելի դիւրաւ կրնաս գտնել : Իսկ հաշուի  
դրեանքս և առեւտրոյ վերաբերեալ թղթերս կնոջմէս  
անգամ կպահէի . և ամենեին ազատութիւն չէի տար  
որ զանոնք տեսնէ կամ անոնց վրայով հարցումներ ընէ :  
Մինչև անգամ զանոնք ձեռք առած ժամանակս մօտս  
չէր կրնար գտնուիլ : Եւ երբ անգամ մը հետաքրք-

քրու թեամբ առևարիս վրայ խնդիրներ կյարուցանէր,  
 իրեն ըսի. «Ահիրաաեմ զքեզ. տիկին իմ, քու պա-  
 «տուցդ համար որ տանն կառավարութիւնը միայն  
 «հոգածութեանդ նիւթ ընես և դրսի գործերուն  
 «վրայ միտքդ ամենեին չյողնեցնես. մանաւանդ որ  
 «կասկածի առիթ կուտայ այս տեսակ հետաքրքրու-  
 «թիւնը: ( ) ի հետաքրքիրը ընդհանրապէս իր գաղտ-  
 «նիքը ուրիշներուն յայտնելէ բողոքովին ազատ է»:

Ըստ տեսակ խօսքերով զինքն համողեցի որ ան-  
 գամ մ'ալ գաղտնիքս իմանալ չուզէ, մինչև որ ես  
 իրեն յայտնել չյօժարիմ:

ՈՐԴԻՔ. Մի՞թէ երբէք իրեն գաղտնիք մը ը-  
 սելդ պատահեցաւ.

ՀԱՅՐ. Աչ երբէք. զի ինքն այնուհետև միայն  
 իրեն վերաբերեալ իրայ դարձոյց իւր ուշադրութիւ-  
 նը. և երբ ես իրեն հետ խօսէի, խօսակցութեանս  
 նիւթը միշտ պիտի ըլլար կամ անտեսութիւնը և կամ  
 զաւակաց դաստիարակութիւնը, որպէս զի միտքն լու-  
 սաւորուելով այս կէտերուն վրայ, աւելի բանաւո-  
 րութեամբ իւր պարտաւորութիւններն կատարէ: Տան  
 համար գնած բոլոր բաներս իրեն կյանձնէի. և որ-  
 պէս աչալուրջ մնայ, ժամանակ ժամանակ զանոնք կը  
 փնտռէի, ըսելով. «Նոչ բան որ օգտակար ու հա-  
 «ճելի է ինձ, նոյնը քեզ ալ սիրելի լինելու է. և  
 «ինչ որ վնասակար ու անհաճոյ է մեզ, քեզ ալ  
 «անհաճոյ պէտք է ըլլայ: Դու արդէն տեսար մեր  
 «ունեցածները, անոնցմով գոհ ըլլամք. Ըստուծով  
 «անոնք օգտակար կըլլան թէ մեզ և թէ մեր զաւա-  
 «կացը»:

ՈՐԴԻՔ . Ի՞նչ պատասխան ըրաւ անիկայ :

ՀԱՅՐ . Պատասխանեց թէ , ուսած է հնազանդիլ իւր ծնողացը . և անոնցմէ հրամայուած՝ որ միշտ իւր ամուսնոյն անսայ . և թէ յօժարամիտ է այնպէս ընելու : Են ատեն ես ալ ըսի . “ ով որ , տիկին իմ , ուսած է հնազանդիլ իւր հօրն ու մօրը , շուտով իւր ամուսնոյն ալ հնազանդիլ կուսնի : Վիտես ի՞նչ ընթացք պիտի բռնեմք : Ինչ ընթացք որ իրենց հայրենեացը համար պահապանները գիշերը կբռնեն պարսպաց վրայ : Արբ ասոնց մէկը ի քուն ըլլայ , մնաս չկրէր , եթէ ընկերը գայ զինքն զարթուցանէ և ի պարտաւորութիւն կոչէ : Այնպէս եթէ դաւ , պակսութիւն մը գործած ատեն , զայն իմաց տաս ինձ , մնասէ կամ վտանգէ ազատ կկացնես զմեզ : Աւտ հաճութիւն պատճառելու չէ քեզ եթէ ես գամ զքեզ զարթուցանեմ և գործոյդ ուշադիր ընեմ : Ասանկով սէրը կաճի մեր մէջ և յաջողութիւնը երբէք դրոներնիս չթողուր : Այս ստացուածքն , ընտանիքը մերն , քոյդ և իմս են . ուստի պէտք է խնամել զանոնք : Աս դուրսը աշխատելով տանը պիտոյքը կհոգամ , դու ալ զանոնք վայելչապէս գործածելուն ուշ կը դնես :

ՈՐԴԻՔ . Յօժարութիւն ցոյց տուաւ այս խօսքին վրայ :

ՀԱՅՐ . Ատարեալ յօժարութիւն ինձ հաճոյ երեւած բանը միշտ ընելո՞ւ “ և ես ըսի ” Տիկին , երկու բան կայ որ ամենէն աւելի հաճելի են ինձ . Ե՛լ լաւ խնամել ընտանիքն . Ի՛նչ հոգ տանիլ որ ընտանեկան

գործերն անկարգութեան մէջ շընկնին :

ՈՐԴԻՔ . Մտանիքն կառավարելու համար հրահանգ տուիք իրեն , թէ ինքն արդէն ամեն բան գիտէր :

ՀԱՅՐ . Գեռահաս օրիորդէ մը այդ բաներուն գիտութիւնը չկրնար ակնկալուիլ : Այսպիսիներէն ամենէն աւելի խնդրուելիք բանը պարկեշտութիւնն ու համեստութիւնն է . որ ոչ սակաւ կդանուէր իւր վարայ : Աստի խոնարհութեամբ ու ակնածութեամբ ինձ պատասխանելով , ըսաւ . թէ հօրը տունը միայն կերակուր եփել , կար կարել , մանել և այլն սովորած էր , ինէ պիտի ունի ընտանիք մը կառավարելը :

ՈՐԴԻՔ . Աւ գուք ի՞նչ պատասխան ըրիք .

ՀԱՅՐ . Անի զինքն սենեակս տարի և փակելով գուռը , ի միասին ծուներ իջած սկսանք աղօթել , որ Աստուած շնորհք տայ մեզ իւր պարգևած բարիքն վայելչապէս գործածելու և երկար կենօք ապրելու ի միասին ի սէր և յուրախութեան : Աղօթեցինք որ Աստուած ինձ կարողութիւն և յաջողութիւն տայ գործոյս մէջ , և կնոջս պարկեշտութիւն ու համեստութիւն և այլն : Յետոյ կանգնելով ըսի իրեն , «Այսպէս պիտի աղօթես ամեն օր . և գիտցիր որ համեստութեան չափ քեզ հարկաւոր , Աստուծոյ ընդունելի , ինձ հաճելի և մեր զաւակացը պատուաւոր բան մը չկրնար ըլլալ : Անոջ համեստութիւնը միշտ ընտանեաց զարդն համարուած է . մօր մը համեստութիւնը միշտ դստերոց օժտի մասն կկազմէ : Անոջ համեստութիւնը ամեն գեղեցկութենէ աւելի յարգ ունի : Ազովեն գեղեցիկ գէմք մը , բայց լկտի աչուր-

ները ամօթով ու պատկառանք կքողարկեն զայն ,  
 գոյնը մոխրի կղարձրնեն , և սիրտը տրտմութեամբ կը  
 լնուն : Միրելի բան է տիկնոջ գեղեցկութիւնը , իսկ  
 անհամեստ նայուածք մը , անպարկեշտ գործ մը ան-  
 ժուժկալութեան իսկոյն անպատիւ կրնէ զայն : Ան-  
 պարկեշտութիւնը ատելի է Աստուծոյ . և անպարկեշտ  
 կանայք երբէք գոհունակութիւն ու հանգիստ չեն  
 գտներ աշխարհիս մէջ : Այնպիսիք իրենց թշնամեացե-  
 միայն սիրելի կրնան լինիլ : Օգոյշ կեցիք ուրեմն ,  
 տիկին իմ , բոլոր այն գործերէն ու շարժումներէն ,  
 որոնք անպարկեշտութեան երեւոյթ մը ունին , երբէք  
 մի՛ մոռանար հանգերձից պարզութիւնը , ճշմարիտ հա-  
 մեստութիւնը : Ամենեին երեսդ ներկած չտեսնեմ .  
 զի ասիկայ ըստ ինքեան հաճելի բան մը չլինելէ զատ ,  
 մեծապէս մնասակար ալ է մորթին և ատամանց” :

ՈՐԴԻՔ . Հաճեցա՞ւ կամ թէ հաւատք ընծայեց  
 խօսքիդ :

ՀԱՅՐ . Անշուշտ հաւատաց . բայց ես զինքն  
 լաւ ևս համոզելու համար , ցուցի իրեն դրացի կին  
 մը , որուն ակռաները թափեր էին , աչուրները կցա-  
 ւէին , և երեսի մորթը կնճռոտեր էր . և ըսի . “Աու-  
 զե՞ս որ դու ալ այդպէս ըլլաս : Աթէ չես ուզեր ,  
 բողորովին հեռի կենալու ես երեսի ներկ գործածե-  
 լէ : Քու պարտաւորութիւնդ ինձ հաճոյ լինելն է .  
 և ինձ հաճոյ չես կրնար երևիլ , եթէ զիս խաբել ու-  
 զես բնականէն աւելի գեղեցիկ ցուցնելով դէմքդ ,  
 և եթէ օտարին հաճոյանալ է դիտաւորութիւնդ , ա-  
 ոխիթ կուտաս կարծելու թէ զուրիշն ամուսինէդ ա-  
 ւելի կսիրես” :

ՈՐԴԻՔ . Հնազանդեցաւ խօսքիդ :

ՀԱՅՐ . Մ.Յ<sup>ո</sup> :

ՈՐԴԻՔ . Եթէ չհնազանդեր , ի՞նչ կրնէիր :

ՀԱՅՐ . Կանայքն յուզողութիւն բերելու համար միշտ քաղցրութիւն դործածելու է . անանկ որ անդորր մտօք իրենց սխալը տեսնեն և սիրտերնին ի սէր շարժի : Ծառայք սպառնալեօք թերևս շահուին . բայց կանայք միշտ սիրով ի հնազանդութիւն կուգան : Մ.Յս նպատակաւ էր ահա որ եթէ երբէք զինքն խրատել պէտք լինէր , առանձինն կխօսէի և անանկ սրտաշարժ եղանակաւ բայց միշտ այրական ուժով մը , որ անշուշտ զինքն պիտի լացներ :

ՈՐԴԻՔ . Ի՞նչ մեծ շնորհակալութեան արժանի է ձեր իմաստուն վարմունքը , որով կրցեր էք բոլոր ընտանիքն երջանիկ ընել :

ՀԱՅՐ . Մ.Յր մը որչափ լաւ ճանչէ իւր գործը , այնչափ հլու և հնազանդ կգտնէ իւր կինը : Երբէք մոռցնելու չէ իրեն թէ դու իւր այրն ես և ոչ ծառայն . թէ համեստութիւնը միշտ հարկաւոր է իրեն , և ընտանեաց բարեկարգութիւնը իւր կենսական օգուտը : Եւ թէ ընտանիքն բարեկարգ պահելու համար հնազանդութիւնը ամենակարևոր պայման մըն է . և ընտանեաց ո՞վ պիտի հանդիսանայ օրինակ հրնազանդութեան , եթէ ոչ ամիսներ : Եթէ կինդ քեզ հնազանդի ու չակնածէ , անշուշտ միւսներն ալ այնպէս պիտի ընեն . եթէ դու ծանրաբարոյ չես , ոչ երբէք ակնածելի կրնաս ըլլալ . եթէ լեզուդ զուսպ չես կրնար պահել , եթէ տան մէջ և դուրսը թեթե

շարժում մը ունիս , ամենեին ակնածելի ու պատկառելի չես կրնար ըլլալ :

Առութիւնը կամ թէ խօսելէ աւելի լսելը միշտ կանանց ծանրաբարոյութեան ու ակնածութեան զարդն համարուած է , և շատախօսութիւնը նշան յիմարութեան : Խօսից մէջ մեր դաղանիքը ուրիշին հաղորդելը կամ ուրիշին խորհրդոյն ու դաղանեացը խօսքն թափանցել ուզելը անվայել ու վնասակար բաներ են : Այլ ի՞նչ արհամարհանաց արժանի չէ այն կինը , որ օրն ի բուն շաղակրատելով և տանն չվերաբերած դործոց վրայ խօսելով կանցնէ , տունն ու ընտանիքը բոլորովին երեսէ ձգած :

Ահա այս սկզբանցն համեմատ վարուելովս ու խրատելովս էր որ մայրերնիդ կատարելութիւն ստացաւ : Այնուհետեւ ամենեին իր կամ որ և է մէկուն անդործ մնալը չտեսայ : Տանը մէջ ամեն կողմ կարգն ու կանոնը կտիրէր . մաքրութիւնը կփայլէր . ամենուն դիմացը վրայ գոհունակութիւն կտեսնուէր . զի իրաւունք կրնէր իւրաքանչիւր անձին արժանեացը :

ՈՐԳԻՔ . Ի՞նչ կերպով ընտանիքն բոլոր իրեն հնազանդեցոյց :

ԱՅՏ . Կիտելով հրամայել . այսինքն՝ շատ ընտանութիւն չընելով ծառայից կամ աղախնեաց հետ . արդիւնելով որ առանց մասնաւոր թոյլատուութեան տրնէն դուրս չելնեն . որպէս զի դործ մը պատահած ատեն մարդու կարօտութիւն չզգացուի : Այլ իր թոյլատուութեամբն դուրս ելնողը եթե ուշկէկ դառնար , քաղցրութեամբ պատճառն կհարցնէր . Այժմէ ծառայից մէջ վէճ մը կամ կռիւ մը ծագէր , անդորրամիտ կմնար , թէ և կուզէր որ վրէժխնդրութեան ոգին տեղ չգտնայ իրենց սիրար . որ չըլլայ թէ իրար վնասելու աշխատելով , տանն ալ վնաս հասցը-

ներն : Արքէք չէր պահեր կռուասէր ծառայն , որ միւս-  
 ներուն բարքն ալ չապականի . ոչ ալ կախորժէր գո-  
 ուողամիտէն , որ և նոյնպէս կվրդովէ տունը : Չէր  
 թողուր որ բանսարկու անձինք տունն կամ ծառայից  
 մօտն յաճախեն : Աթէ ծառայից մէկն պակսութիւն  
 մը գործէր , առանց խօսք մը ընելու կամ ձայն հա-  
 նելու , նայուածքով մը զինքն կպատկառեցնէր . իր  
 հրամանները միշտ քաղցր ու բանաւոր էին . անանկ  
 որ ծառայք յօժար սրտով կհնազանդէին (1) :

ՈՐԳԻՔ . Ալ ի՞նչ կանոն դրեր էր կահուց և  
 կարասեաց նկատմամբ :

ՉՅՅԲ . Վանրագին կամ ամեն օր չգործած-  
 ուելիք բաները կղպաքի ներքև ղետեղուած և ամեն  
 օր կամ ամեն ժամանակ գործածուելիքները բացը ,  
 բայց իրենց յատկացեալ տեղուանքը դրուած կպա-  
 հէր . անանկ որ պէտք եղած ատեն գտնելու դժուա-  
 րութիւն չկրուի , և կեցած տեղերնին իրարմէ չմնա-  
 սին : Վան մը գործածելու համար տեղէն վերցնելէն  
 ետև , երբ գործը կատարուէր , անմիջապէս տեղն  
 դնել կուտար : Վմառը գործածուելիքն ձմեռը կպա-  
 հէր , և ձմեռը գործածուելիքն ամառը : Աթէ բա-  
 նալի մը մէկուն հաւատար , ատեն չէր անցընէր ետ  
 առնելու . ամեն օր տանն մէջ եղածին բոլորն ալ աչ-  
 քէ պիտի անցնէր , որպէս զի տեսնայ թէ ամեն բան  
 իր տեղն է : Ալ եթէ բան մը պակսէր , անմիջապէս  
 փնտռել , գտնել կուտար . միշտ աչալուրջ կհսկէր որ  
 հարկաւորէն աւելի բան մը չվատնի , և երբէք ան-  
 գործ չէր մնար , ուստի և կատարեալ քաջառողջու-  
 թիւն կվայելէր :

---

(1) Տես ի սկզբունս դաստիարակութեան Վերք  
 Գ . ԳԼ . Ե :

ՈՐԴԻՔ . Պաշարի կամ ուտելեաց և ըմպելեաց պահուելուն համար ի՞նչ կանոն կայ :

ՆՅՅԲ . Ամեն բան իր բնութեանը յարմար տեղը զետեղելն է ամենակարևոր կանոնը . զի ան ատեն ոչ կապահանի ոչ ալ որ և է կերպով մը կվատնի : ( ) ըինակի աղագաւ , ցորենի նման բաները զով տեղ և հիւսիսային հով կուզեն . գինին այնպիսի տեղ մը պէտք է պահել , ուր ոչ ցուրտ ոչ ալ շատ ջերմութիւն կայ , ոչ հով բանի , ոչ ալ մնասակար հոտ մը բուրէ : Ալ յաճախակի երթալու , նայելու է որ չըլլայ թէ ապահանի և եթէ ապահանիլ սկսեր է , անմիջապէս դարմանն մտածուի : Ալ այսպիսի բաները անշուշտ բանալիի ներքե լինելու , և բանալին տան տիկնոջը կամ ուրիշ հաւատարիմ անձի մը մօտն գտնուելու է :

ՈՐԴԻՔ . Գլորոցներուն բանալիքը որո՞ւ ձեռքն գտնուելու են :

ՆՅՅԲ . Ամեն ժամանակ դործածուելիքն տիկնոջը մօտն ըլլալ չպատշաճիր . զի մեծ ձանձրոյթ կը պատճառէ իրեն երկու մայրկեանն անգամ մը զանոնք տալ ու ետ առնել : Այլ լաւ ևս է ծառայից կամ աղախնեաց հաւատարմագունին յանձնել զանոնք :

ՈՐԴԻՔ . Օճառայից կամ աղախնեաց սնունդն ի՞նչպէս ըլլալու է :

ՆՅՅԲ . Օճառայք ալ ըստ իմիք տանն զաւկրները համարուելով , պէտք է զանոնք լաւ սնուցանել . այսինքն՝ քաջառողջ կերակուրների կերցնել ու բաւական՝ քանակով . որպէս զի ոչ անօթի կամ ծարաւ մնան , ոչ ալ հիւանդանան . զի հիւանդէն չես կըրնար պահանջել իր պարտաւորութիւնը : Ալ եթէ ծառայիդ կամ աղախնոյդ հիւանդութիւն մը պատահի , միանգամայն քու պարտաւորութիւնդ ու օգուտդ

է զանոնք խնամել, բժիշկի ցուցնել և այլն :

ՈՐԴԻՔ . Տանն պաշարը գնած ատեն ի՞նչ կանոնի հետևելու է :

ՀԱՅՐ . Միշտ առաջմէ լաւ մտածելու է թէ այս ինչ տեսակ բանէն որչափ պէտք կըլլայ . և թէ մէկ անգամուն որքան եթէ առնուի, չապականիր : Իսկ գնած ատենդ ուշագրութեան գլխաւորապէս արժանի բանը լաւն ճանչելն է . Այլ լաւը միշտ յոռիէն աւելի դիւրագին է մէկ նկատմամբ . զի թէ և ստակը շատ կուտան, բայց ամենեին չվատնիր : ( ) րինակի աղագաւ եթէ դիւրագնութիւնը հաշուելով թթուած գինին առնես, կէսէն աւելին ունայն տեղը կվատնի . եթէ օխայ գլուխ քառասուն փարայ վար գնով նիհար միս գնես, ոչ համեղ կերակուր մը կրնաս ուտել, ոչ ալ դեր մսին չափ կերակուր կերիուի :

ՈՐԴԻՔ . Արեմն շատ իրաւամբ ըսեր են թէ սուղն աժան կըլլայ :

ՀԱՅՐ . Ընտարակոյս : Ատենէ՞ք վերարկուս . վեց տարիէ ի վեր կգործածեմ, և դեռ կհազնուի : Ի՞նչ է պատճառը . չուխային լաւութիւնը : Եթէ կանգունը տասն կամ քսան դուրուշ վար գնով ուրիշ տեսակ չուխայէ մը շինուած ըլլար, այսքան կգիմանար :

ՈՐԴԻՔ . Ը՛հ, ի՞նչ մեծ բան է օգուան ճանչել :

ՀԱՅՐ . Մանաւանդ եթէ տիկինն ալ ճանչէ : Ար տուն կրցեր է տիկնոջն գեղեցկութեամբը հարստանալ, բայց շատերը կրցեր են մեծ գանձուց տիրանալ անոր ժրութեամբը, խելքովն ու առաքինութեամբը : Ղշմարտիւ գեղեցիկը այն կինն է որ կը փափաքի աշխատասէր, ժիր ու համեստ և բանաւոր ըլլալ քան թէ գեղեցիկ երևիլ : Այլ ի՞նչ բանի կհաւասարի կնոջ մը զուարթ գէմքը, որով մեզ կգիման-

ւորէ երեկոյն տուն դարձած ատեննիս . ինչ զուար-  
ճալի ազդեցութիւն մը չընէր մեր վրայ տանը մաքրու-  
թիւնն ու կարգաւորութիւնը : Միթէ իսկոյն չեմք  
մոռնար շուկային վիշտերը . միթէ մեր մտքէն չ'վա-  
նիր յուզմունքն ու չար մարդոց լուրթ յիշատակը .  
տիկնոջ քաղցր խօսքերն , և զմեզ գոհ ու հանգիստ  
ընելու յօժարութիւնը չ'կազդուրէր մեր ջիղերը :

ՈՐԴԻՔ . Վրամոյ տնտեսութիւնն ալ մեղ կը  
հասկցնէք :

ՆԱՅԲ . Վրամոյ վերաբերեալ տնտեսութիւնն  
ալ չտարբերիր ուրիշ տեսակ ստացուածոց վրայով  
խօսածէս . այսինքն՝ գործածել զայն ըստ հարկին և  
աւելորդն պահել , կամ անով նպաստել բարեկամիդ ,  
ծնողացդ և ազգիդ :

ՈՐԴԻՔ . Բարեկամաց և ծնողաց նպաստել ը-  
սելով ինչ կիմանաք :

ՆԱՅԲ . Ընոնց դրամ փոխ տալ կամ օժտել :

ՈՐԴԻՔ . Ո՞րքան և ինչ կերպով դրամ փոխ  
տալու եմք բարեկամաց :

ՆԱՅԲ . Ոչ երբէք բոլոր ունեցածդ կամ մեծա-  
գոյն մասը . և միշտ օրինաւոր կերպով ապահովա-  
գրութիւն առնելով :

ՈՐԴԻՔ . Իսկ ազգիդ նպաստելն ինչ է :

ՆԱՅԲ . Ըզգի նպաստել ըսելով կիմանամ կրօ-  
նական շինուածոց , ազքատանոցաց , հիւանդանոցաց  
և մանաւանդ վարժարանաց ու տպարանաց բարեկար-  
գութեանը սատարել և այլն :

ՈՐԴԻՔ . Միթէ մարդ չ'կրնար առանց վարժա-  
րանի իր զաւկները դաստիարակել :

ՆԱՅԲ . Մինչև անգամ եթէ վիճակդ ներէ զա-  
ւակացդ համար առանձին դասատուներ կամ դաստիա-  
րակներ ունենալ , տակաւին բարեկարգ վարժարան մը

աւելի նախապատիւ է . զի հոն տղաք դաստիարակ-  
 ուելէ զատ , տեղակիան բարեկամութիւններ ալ  
 կրնան կապել իրարու հետ , որ վերջը մեծապէս օգ-  
 տակար կրնայ լինել : Մանաւանդ որ հասարակաց  
 վարժարանի մը հաստատ եկամուտ ունենալուն նպաս-  
 տելովդ , ոչ միայն զաւկներդ անկէ կօդտին , այլ և  
 բոլոր սերունդդ դարուց ի դարս :

ՈՐԴԻՔ . Ղրամը նախապատիւ է թէ անշարժ  
 կալուածքը :

ՀԱՅՐ . Ղրամը թէ և կալուածոց կամ անշարժ  
 ստացուածոց պաշտօնը կկատարէ , բայց անոր չափ ա-  
 պահով չէ վտանգէ : Շատ դիւրին է կորսնցնելն ,  
 խիստ դժուարին պահելը և յոյժ վտանգաւոր գործա-  
 ծելը : Իսկ անշարժ կալուածքն մանաւանդ մշակեալ  
 երկիրները դրամոյ նման յողդողդ ու անկայուն չեն :  
 Աթէ այս տարի փոթորիկն յաճախէ , շատ անձրև  
 դայ , սաստիկ ցուրտ կամ ջերմութիւն ըլլայ , կամ  
 մնասակար հովեր փչեն , երկրորդ կամ երրորդ տարին  
 մնասը կկեցուի : Իսկ ամենէն ապահովը բոլոր հա-  
 րրատութիւնն մէկ տեսակ ստացուածոց չտալն է .  
 այսինքն՝ միանգամայն մշակութիւն ընել երկրի և վա-  
 ճառականութեան պէս գործ մ'ալ ձեռքդ ունենալ .  
 զի ան ատեն ընդհանրապէս մէկ կողմէն կրած մնա-  
 սրդ միւս կողմէն կրնաս լեցնել :

ՈՐԴԻՔ . Ղաւակաց պատանեկութեանը ժամա-  
 նակ իրենց մանր մունր ծախուցը համար դրամ տալը  
 լաւ բան է արդեօք :

ՀԱՅՐ . Աթէ սուր ածելին տղումը ձեռքն  
 տալը վտանգաւոր է , նոյնպէս ալ շատ դրամը վտան-  
 գաւոր կրնայ ըլլալ անխորձ պատանեկին ձեռքը :  
 Իայց եթէ երբեմն երբեմն մէկ քանի դահեկան ի-  
 րեն պարգև ընես ու լաւ դիտես թէ ինչ բանի կը-

գործած է , շատ օգտակար հետեութիւններ կրնայ ունենալ : Արնաս այս կերպով տնտեսութեան կարևոր գաղափարներն իբր թէ իր միտքն յեղուլ , և առաքինութեան վարժել :

ՈՐԴԻՔ . Օւաւկները դաստիարակելէն ետե առևտրի սկսելու ատեն անմիջապէս իրենց դրամագլուխ դնելը լաւ է թէ թողուլ որ իրենք իրենց ջանիւքք դրամագլխի տէր ըլլան :

ՀԱՅՐ . Տարոյական և իմացական դաստիարակութենէ ետե կուգայ առևտրական դաստիարակութիւնը կամ արհեստ մը , զոր հայր մը իւր որդւոյն բերմունքն ու ձիրքերը և իր վիճակը լաւ քննելով պիտի որոշէ և զորդին յայն համոզէ : Ասանկ գործոյ մը մէջ բաւական վարժուելէն ետե , դրամագլուխ տալով իրեն , իւր անմիջական խնամոցը ներքե առանձին գործոյ տէր ընէ կամ անխորձ անձի մը հետ ընկերացնէ : Օյ այս միջոցաւ շուտ կըարգանայ առևտրի մէջ . և ամուսնութեան ճամբայ կըացուի :

ՈՐԴԻՔ . Շուտ ամուսնանալը լաւ է թէ ոչ :

ՀԱՅՐ . Խիստ շուտը երբէք լաւ չէ , խիստ ուշն ալ երբէք չկրնար գովուիլ : Անէ քսան և մէկ տարեկան լինելու է որդիդ և բաւականապէս ծանօթ աշխարհային և առևտրական իրաց : Այրուտի աղբիւր մը ունենայ , և ոչ թէ բոլորովին ճնողացն կարօտի :

ՈՐԴԻՔ . Ինչպիսի ընտանիքէ առնելու է աղջիկը :

ՀԱՅՐ . Հաւասարաստիճան ընտանիքէ հարս բերելը ամենէն բանաւորն է . զի ան ատեն երկու կողմէն ալ գոռոզութեան առիթ չգտնուիր : Օնուզաց պարտաւորութիւնն է իրատել իրենց որդիքը և տալ ճանաչել իրենց օգուտը : Աստի ծագած խնամութիւններն ալ կարևոր նիւթ մըն է մտածութեան :

և եթէ խոհեմութեամբ վարուիմք , խիստ շահաւէտ  
կրնայ ըլլալ վերջը : Օ՛րի կրանայ մէջ ընդարձակ աս-  
պարէզ մը նոր ծանօթներ , նոր բարեկամներ ստա-  
նալու , որոնք անգին բաներ են աշխարհիս մէջ (1) :

Այսպիսի սկզբանց համեմատ վարուելովս էր  
ահա , որդեակք , որ Աստուծով այս յաջողութիւնը  
կվայելեմ . հետեւեցէք ուրեմն խրատուցս . և ան ա-  
տեն անտարակոյս եմ որ դուք ալ երկրիս վրայ միշտ  
հանգիստ կապրիք : Արբէք իրաւունքն , արդարու-  
թիւնը , տնտեսութիւնն ու մարդասիրութիւնը ձեռ-  
քէ մի՛ ձգէք ձեր գործոցը , խօսիցն ու խորհրդոցը  
մէջ : Օգոյշ կեցէք թշնամանքէ , անմիաբանութենէ ,  
վէճէ և կռիւէ : Ալ եթէ մէկը հպարտութեամբ ու  
գոռոզութեամբ վրանիդ իշխել ուզէ , վանեցէք զայն  
համբերութեամբ և ծուժկալութեամբ . և դէմ  
դրէք անոր բուն յարձակմանը՝ խոնարհութեան ,  
ծանրաբարոյութեան և պարկեշտութեան զինուք :

---

(1) Տես ի սկզբունս դաստիարակութեան գիրք

Դ . ԳԼ . Գ .

ՍԵՐՑ



Ե.Օ.Գ

Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ե Մ Ս Ե Ե Յ

Մյս անուն Հանդէսը ամեն ամսոյ մէկին ու տասն և հնգին կհրատարակուի: Իւրաքանչիւր թերթ 24 կրեսէ բաղկացեալ: Իովանդակութիւնն է

Մզգային, Ռուսումնական և Մուղղական. Տարեկան գինն է քսան դրուչնոց մէկ արծաթ մէծիտիյէ կանխիկ վճարելի:

Ստորագրութեան կերպրոնատեղին է

Գաշոգճը խան թիւ 4. — Ար կգտնուին

1. Աղբուք գաստիարակութեան Մ.

և Ի. հաստը:

2. Տաճար Մուսայից Մ. և Ի. թիւ.

3. Հաւաքածոյ Հայկական ասացուածոց:

4. Անկտարինէ կոյս նահատակ:

5. Մենաստանին Մղորին

6. Մեծն Աերսէս, սղբ:

10013



պի 45

<< Ազգային գրադարան



NL0025767

0025767

պի 44

<< Ազգային գրադարան



NL0025766

0025766

պի 43

<< Ազգային գրադարան



NL0025765

0025765

0025768

<< Ազգային գրադարան



NL0025768

պի 42

<< Ազգային գրադարան



NL0025764

0025764

պի 46

<< Ազգային գրադարան



NL0025763

պի 41

0025763

